



ՍԴՅԿ-ի Շնորհաւորական Ուղերձը Վարչապետ Նիկոլ Փաշինեանին

Մեծարգոյ Պրն. Վարչապետ, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան եւ համայն Հնչակեան ընտանիքին անունով կը շնորհաւորենք Ձեզ՝ Հայաստանի Հանրապետութեան Վարչապետի բարձր ու պատասխանատու պաշտօնին վերընտրուելու առիթով:

Համաժողովրդական շարժման յաղթանակը եւ վերջին խորհրդարանական ընտրութիւններուն Ձեր ղեկավարած «Իմ քայլը» դաշինքին ցուցաբերած տպաւորիչ արդիւնքները կը վկայեն այն մասին, որ Հայաստանի քաղաքացին Ձեզ կը վստահի՝ ղեպի աւելի ժողովրդավար, տնտեսապէս հզօր ու սոցիալապէս արդար երկիր մը կառուցելու կարեւորագոյն առաքելութիւնը:

Այդ վստահութեան բարձր քուէն անշուշտ իր հետ կը բերէ մեծ ակնկալութիւններ, ոչ միայն Հայաստանի քաղաքացիներուն, այլ համայն հայութեան համար, մանաւանդ ի տես հայրենիքի առջեւ ծառայած բազում ներքին եւ արտաքին խնդիրներուն եւ մարտահրաւերներուն:

Լիայոյս ենք, որ պարտականութեան բարձր գիտակցութեամբ պիտի շարունակէք անշեղօրէն գործադրել Ձեր նախանշած արմատական բարեփոխումները երկրի կառավարման տարբեր ոլորտներուն մէջ, որպէսզի աւելի ամուր հիմքերու վրայ դրուին օրէնքի գերակայութիւնը, արդարութիւնը եւ քաղաքացիական հասարակութեան լիարժէք մասնակցութիւնը քաղաքական գործընթացներուն բացառելով վերադարձը նախկին անընդունելի իրավիճակին:

Կրկին կը շնորհաւորենք Ձեզ եւ մեր պատրաստակամութիւնը կը յայտնենք հետագայ համագործակցութեան, ի փառս մայր հայրենիքի եւ հայ ժողովուրդի:

Ս.Դ.Հ.Կ Կեդրոնական
Վարչութիւն

Փաշինեան Ոչ Պաշտօնական Հանդիպում Ունեցած Է Իլիամ Ալիեւի Հետ

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան Տաւուսի մէջ, ուր տեղի կ'ունենայ տարեկան տնտեսական միջազգային ժողովը, ոչ պաշտօնական հանդիպում ունեցած է Ատրպէյճանի նախագահ Իլիամ Ալիեւի հետ:

Փաշինեան այդ մասին գրած է իր «Ֆեյսպուքեան» էջին վրայ:

«Մտքեր փոխանակեցինք բանակցային գործընթացի ընթացիկ իրավիճակի եւ հետագայ քննարկումների մասին: Հանդիպումը տեւեց մօտ ժամուկէս», - մասնաւորապէս գրած է Փաշինեան:

Վարչապետ Նիկոլ Փաշինեանը Տաւուսի մէջ մեկնարկած Համաշխարհային տնտեսական համաժողովի շրջանակէն ներս երկկողմ հանդիպումներ ունեցած է արտերկրի գործընկերներուն հետ: Վարչապետը նախ հանդիպած է «Միթսուպիչի Հեւի Ինտասթրիք» ընկերութեան խորհուրդի անդամ Քրիսթինա Աճմաճեանին, ապա՝ ձափոնի միջազգային համագործակցութեան գործակալութեան (JICA) նախագահ Շինիչի Քիթաոքային հետ:

ձափոնականներ ընկերութիւններուն հետ քննարկուած են համագործակցութեան խորացման հնարաւորութիւններուն վերաբերող հարցեր:



Փաշինեան-Ալիեւ հանդիպումը Տաւուսի մէջ

Վարչապետը կարճատեւ հանդիպումներ ունեցած է Պրազիլի նախագահ Ժաիր Բոլսոնարուի, Լիբանանի վարչապետ Քաւլէյ Բեթելի եւ Եգիպտոսի վարչապետ Մուստաֆա Մաթպուլիի հետ:

Լիբանանի վարչապետ Քաւլէյ Բեթելի հետ հանդիպման քննարկուած են երկու երկրներու շարաքերութիւններուն առնչուող հարցեր:

Եգիպտոսի վարչապետ Մուստաֆա Մաթպուլիի հետ հանդիպումներ քննարկուած են երկու երկրներու միջեւ տնտեսական փոխգործակցութեան եւ գործարար կապերու խորացման վերաբերող հարցեր: Նիկոլ Փաշինեան եւ Եգիպտոսի վարչապետը կարեւոր նկատած են Եւրասիական Տնտեսական Միութեան եւ Եգիպտոսի միջեւ ազատ առևտուրի համաձայնագրի ստորագրումը: Մուստաֆա Մաթպուլի յայտնած է, որ այդ գծով կ'ակնկալեն Հայաստանի կառավարութեան աջակցութիւնը:

Հագարաւոր Մարդիկ Պոլսոյ Մէջ Ոգեկոչած են Հրանդ Տիմքի Յիշատակը



Պոլսոյ մէջ մարդիկ հաւաքուած են Հրանդ Տիմքի սպանութեան վայրը

«12 տարի է արդարութիւն չկայ, Հրանդը չկայ, հրաժարիլ չկայ», - այս ուղերձի ներքոյ հագարաւոր մարդիկ Յունուար 19-ին Պոլսոյ մէջ հաւաքուած էին «Ակօս»-ի նախկին խմբագրատան առջեւ՝ յիշելու 12 տարի առաջ թուրք ազգայնականի կրակոցներէն սպանուած պոլսահայ նշանաւոր մտաւորական, «Ակօս»-ի հիմնադիր խմբագրապետ Հրանդ Տիմքը:

Թրքական ոստիկանութիւնը լայնածաւալ միջոցառումներ ձեռնարկած էր՝ ապահովելու համար հաւաքի անվտանգութիւնը, փակուած էին խմբագրատուն տանող ճանապարհները, յարակից մեթրօյի կանգառը:

Այս տարի «Ակօս»-ի խմբագրատան պատշգամէն Տիմքին նուիրուած հարգածներ կ'ունենան:

ԵՄ-ն ու ՀԴ-ն Աւելի Քան 700 Միլիոն Եւրօ Պիտի Տրամադրեն Հայաստանի Մէջ Իրագործելի Ծրագիրներու Համար

Յառաջիկայ տարիներուն Եւրոմիութիւնն ու Համաշխարհային դրամատունը շուրջ 13 միլիարդ եւրօ պիտի տրամադրեն՝ Արեւելեան գործընկերութեան ծրագրին մաս կազմող վեց պետութիւններու՝ Հայաստանի, Ատրպէյճանի, Վրաստանի, Ուբրանիոյ, Մոլտովայի եւ Պելլառուսի մէջ ենթակառուցութեան շարք մը լայնածաւալ ծրագրեր կեանքի կոչելու նպատակով:

Ծրագրի մեկնարկի մասին ԵՄ-ն յայտարարած է Յունուար 15-ին: Եւրոպական հարեւանութեան քաղաքականութեան եւ ընդարձակման բանակցութիւններու գծով ԵՄ յանձնակատար Եոհանէս Հանի խօսքով՝ «այս ծրագրի ամբողջացումը համատեղ յանձնառութիւն է, որ հնարաւորութիւն կու տայ զգալի դրական արդիւնքներ ապահովել տարածաշրջանի բոլոր բնակիչներուն համար»:

Եւրոմիութեան հրապարակած փաստաթուղթին համաձայն, այս ծրագրի շրջանակէն ներս Հայաստանը կ'առնէ 700 միլիոն եւրօ:

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Պնդում՝ Զերքման Փոխարեն. Քոչարեանը՝ Ահաբեկչութեան Ու Արեան Սիմվոլ

ՍԱՐԳԻՍ ԱՐԾՐՈՒՆԻ

Երեւան քաղաքի ընդհանուր իրաւասութեան առաջին ատեանի դատարանի դատաւոր Ս. Երիցեանը, քննարկելով Ռոբերտ Քոչարեանի՝ ընդդէմ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊ ընկերութեան գրպարտութիւն համարուող փաստացի տուեալները հրապարակայնօրէն հերքելու եւ գրպարտութեան դիմաց փոխհատուցում ստանալու պահանջները, քաղաքացիական գործով վճիռ է կայացրել՝ հայցը բաւարարելով մասնակի:

1in.am լրատուական կայքը պէտք է հերքում տեղադրի չորս յօդուածի վերաբերեալ՝ նշելով, որ դրանք չեն համապատասխանում իրականութեանը, պէտք է հայցի Ռոբերտ Քոչարեանի ներողամտութիւնը, եւ պէտք է կայքից բռնազանձուի 400 հազար դրամ՝ որպէս ոչ նիւթական վնասի փոխհատուցում: 1 մլն 600 հազար դրամ ոչ նիւթական վնասի բռնազանձման պահանջը դատարանը մերժել է:

Դատարանը 1in.am ինտերնետային կայքին պարտաւորեցրել է 07.06.2018 թուականին հրապարակուած՝ «Գրիգոր Գրիգորեանը ցուցմունք է տուել Ռոբերտ Քոչարեանի դէմ, վերջինս կալանաւորուել է», 23.06.2018 թուականին հրապարակուած՝ «Ռոբերտ Քոչարեանի խուճապը, երկրորդ նախագահը՝ բանտի ճանապարհին», 24.06.2018 թուականին հրապարակուած՝ «Հակայեղափոխութեան արիւնոտ սիմուլը՝ Ռոբերտ Քոչարեան», 28.06.2018 թուականին հրապարակուած՝ «Քոչարեան-Սարգսեան Արիւնոտ քսանամեակի շահառուները» վերնագրերով յօդուածներում տեղ գտած Ռոբերտ Մեդրակիի Քոչարեանի վերաբերեալ տեղեկատուութիւնը հերքել հետեւեալ կերպ. վճիռը օրինական ուժ ստանալուց յետոյ երկու օրուայ ընթացքում առաւօտեան ժամը 09:00-ին (սահմաններում) www.1in.am ինտերնետային կայքում հրապարակել հերքում: Պէտք է նշուի, որ չորս յօդուածներում տեղ գտած Ռոբերտ Քոչարեանի վերաբերեալ տեղեկատուութիւնն իրականութեանը չի համապատասխանում եւ գրպարտութիւն է:

Իհարկէ, «Առաջին Լրատուական»-ը իրաւական հարթութեան վրայ կը վիճարկի առաջին ատեանի դատարանի վճիռը, սակայն խնդիրը քննարկելի է յատկապէս քաղաքական հարթութեան վրայ:

«Առաջին Լրատուական»-ը յեղափոխութեան առաջին օրերից եղել է դրա հետեւողական պաշտպաններին մէկը՝ մինչեւ խորհրդարանական ընտրութիւնները յեղափոխութեան թիկունքը պահելով ուեւանչիզմի բոլոր յարձակումները: Մեր կայքն արել է առաւելագոյնը՝ նոր Հայաստանի գաղափարն իրականութիւն դարձնելու, յեղափոխութեան արդիւնքների կապիտալիզացմանը նպաստելու համար:

Այդ համատեքստում յոյժ կարեւոր ենք համարել քրէսօլիգարիալի վերջին քսանամյակում կատարուած արիւնոտ ոճիւրների բացայայտումը, խօսքը վերաբերում է յատկապէս Հոկտեմբերի 27-ի ու Մարտի 1-ի յանցագործութիւնների բացայայտմանը:

Մարտի 1-ի գործում արձանագրուել է հական առաջընթաց, ու Ռոբերտ Քոչարեանին առաջադրուել է մեղադրանք՝ սահմանադրական կարգը տապալելու յատկանիշերով: Պնդել ենք ու շարունակում ենք պնդել, որ Ռոբերտ Քոչարեանն է արիւնոտ այդ ոճի կազմակերպիչը, ու, բնականաբար, չենք պատրաստուում որեւէ հերքում տպագրել մեր լրատուամիջոցի հարթակում: Աւելին՝ համոզ-

ված ենք, որ նախաքննութեան ու դատավարութեան ընթացքում դրուագ առ դրուագ հաստատուելու են մեր հրապարակումներում տեղ գտած բոլոր պնդումները: Ռոբերտ Քոչարեանը յանցագործ է, ու մենք չենք պատրաստուում հայցել մէկի ներողամտութիւնը, ում ձեռքերը թաթախուած են արեան մէջ:

Աւելին՝ «Առաջին Լրատուական»-ը հետեւողականորեն շարունակելու է հետամուտ լինել նաեւ Հոկտեմբերի 27-ի լիարժէք բացայայտմանը՝ այն վստահութեամբ, որ դրա հիմնական շահառուները համարուած են Ռոբերտ Քոչարեանն ու ուսական կայսրութիւնը:

Ռոբերտ Քոչարեանի իշխանավարման արիւնոտ տասնամեակում հնարաւոր է դարձել Հայաստանի ժողովրդի վստահութեան մանդատը ստացած պետական գործիչների գնդակահարութիւնը խորհրդարանի նիստերի դահլիճում, Հայաստանի առնուազն տասը քաղաքացիների գնդակահարութիւնը Երեւանի փողոցներում: Հոկտեմբերի 27-ն ու Մարտի 1-ը ասոցացուած են Ռոբերտ Քոչարեանի անուան հետ, ու նա դատուելու է կատարած յանցագործութիւնների համար: Սա է մեր պատասխանը առաջին ատեանի դատարանի որոշմանը:

Եթէ առաջին ատեանի դատարանը նման անհետեւի որոշում է կայացնում, ապա նոր Հայաստանը դեռեւս իրականութիւն չի դարձել բովանդակային, ինստիտուցիոնալ հարթութեան վրայ, ու այս ամէնի քաղաքական պատասխանատուն օրուայ իշխանութիւններն են, որոնք անցած ինն ամիսների ընթացքում չեն ցուցաբերել անհրաժեշտ հետեւողականութիւն:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Մամուլում չեն դադարում Արցախը Հայաստանի նախկին իշխանութեան հետ նոյնականացնելու միտումով արուող հրապարակումները:

Լրատուամիջոցներից մէկը տպաւորութիւն է փոխանցել, թէ «Արցախն ու նրա իշխանութիւնները դարձել են այն քաղաքական, նոյնիսկ գաղափարական միջավայրը, պլացդարմը, որոնց վրայ յենուելով՝ հին համակարգը ամբողջացնող քաղաքական ուժերը կառուցում են իրենց շարաբերութիւնները Հայաստանի նոր իշխանութիւնների հետ»:

Երեւում է, որոշ շրջանակների ձեռնտու չէ, որ Արցախում հաստատուել է ներքաղաքական կոնսենսուս առ այն, որ իշխանափոխութիւնը տեղի է ունենալու բացառապէս սահմանդրական ճանապարհով՝ եկող տարի կայանալիք նախագահի եւ խորհրդարանի ընտրութեամբ, եւ այդ մօտեցումը պաշտպանուում է Հայաստանի նոր իշխանութեան կողմից: Ըստ երեւոյթի, ոմանք կը ցանկանային, որ Արցախում «յեղափոխական գարգացումներ», սկսուէին՝ ինչպէս որ նման նպատակ օրերս Ստեփանակերտում հնչեցրել է «Սասնա ծռեր» կուսակցութեան անդամ Ժիրայր Սեֆիլեանը:

Ու՞մ Շահերն են Սպասարկում

Սպասարկում չեն դադարում Արցախը Հայաստանի նախկին իշխանութեան հետ նոյնականացնելու միտումով արուող հրապարակումները:

Լրատուամիջոցներից մէկը տպաւորութիւն է փոխանցել, թէ «Արցախն ու նրա իշխանութիւնները դարձել են այն քաղաքական, նոյնիսկ գաղափարական միջավայրը, պլացդարմը, որոնց վրայ յենուելով՝ հին համակարգը ամբողջացնող քաղաքական ուժերը կառուցում են իրենց շարաբերութիւնները Հայաստանի նոր իշխանութիւնների հետ»:

Երեւում է, որոշ շրջանակների ձեռնտու չէ, որ Արցախում հաստատուել է ներքաղաքական կոնսենսուս առ այն, որ իշխանափոխութիւնը տեղի է ունենալու բացառապէս սահմանդրական ճանապարհով՝ եկող տարի կայանալիք նախագահի եւ խորհրդարանի ընտրութեամբ, եւ այդ մօտեցումը պաշտպանուում է Հայաստանի նոր իշխանութեան կողմից: Ըստ երեւոյթի, ոմանք կը ցանկանային, որ Արցախում «յեղափոխական գարգացումներ», սկսուէին՝ ինչպէս որ նման նպատակ օրերս Ստեփանակերտում հնչեցրել է «Սասնա ծռեր» կուսակցութեան անդամ Ժիրայր Սեֆիլեանը:

Խնդիրն այն է, թէ իրականում ու՞մ շահերն են սպասարկում քաղաքական այդ նպատակադրուածութեան կողմի քանի տասնեակ անձինք Արցախում եւ նրանց գաղափարական ու քարոզչական հովանաւորները Հայաստանում:

Ներարցախեան կայունութիւնը, հաւանաբար, ձեռնտու չէ որոշ ուժերի, եւ նրանք ամէն ճիգ գործադրում են՝ տպաւորութիւն յարուցելու, որ Արցախը «Հայաստանի նախկին իշխանութիւնների պլացդարմն է, որտեղից կարող է սկսուել հակայեղափոխութիւն»:

Արցախի քաղաքական ամենագրեցիկ ուժը՝ «Ազատ Հայրենիք» կուսակցութիւնը, յայտարարել է, որ անվերապահօրէն աջակցում է Հայաստանի նոր իշխանութեանը եւ Նիկոլ Փաշինեանին: Որեւէ քաղաքական ուժ Արցախից այլ բնոյթի տեսակէտ չի հնչեցրել:

Այս իրավիճակում ինչի՞ վրայ է յենուում ենթադրութիւնը, թէ Արցախը «կարող է հակայեղափոխութեան պլացդարմ դառնալ»:

Նման պնդում անելու հիմքեր չկան, փոխարէնը մեծ է որոշ շրջանակների ցանկութիւնը՝ տարածայնութիւններ սաղրելու Հայաստանի եւ Արցախի իշխանութիւնների միջեւ:

Եւ կարելի է վստահաբար ենթադրել, որ դա ներհայկական ուսման թիւն է, որ Փաշինեանի կատարուածութիւնից գերմարդկային ջանքեր ու ժամանակ կը պահանջուի տնտեսութիւնն ու շքի բերելու համար:

2018թ. Օգոստոսին, իր հարցազրոյցներից մէկում Մարտի 1-ի գործով ՀՀ սահմանադրական կարգը տապալելու մէջ մեղադրուող երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարեանը, խօսելով թաւշեայ յեղափոխութիւնից յետոյ ժողովրդի

ցանկութիւն չէ, մոռնուած է որեւէ երրորդ խաղացողի կողմից, որի նպատակը համահայկական համերաշխութեան տրոհումն է, Ստեփանակերտի կոշտ հակադրումը Երեւանին՝ դրանից բխող հետեւանքներով հանդերձ: Արցախեան առաջատար քաղաքական ուժերի համար խնդիր է դառնում իշխանափոխութեան հարցում կոնսենսուսին նոր բովանդակութեան հաղորդումը: Այս իմաստով անհասկանալի է որոշ կուսակցութիւնների լուրերը:

Եթէ Արցախում քաղաքական աշխուժութիւն չսկսեն դաշտի հիմնական խաղացողները, ապա մեծանում է վակուումը զանազան խմբաւորումներով լցնուելու հաւանականութիւնը: Այդ դէպքում կարող է ծագել նաեւ «նաւակ ճօճելու» գայթակղութիւն:

Յամենայն դէպս, «Սասնա ծռերը» չեն թաքցնում, որ Արցախում մտադիր են նման տրամադրութիւններ գնեւերացնել: Ի՞նչ են առաջարկում միւս քաղաքական ուժերը՝ երեւի պարզ կը դառնայ առաջիկայում: Նրանցից ամենաազդեցիկ «Ազատ Հայրենիքն» արդէն յայտարարել է, որ եկող տարուայ քաղաքական գործընթացների ամենագործուն մասնակիցն է լինելու:

«ՀՐԱՊԱՐԱԿ»

Փաշինեանի Դէմ Ձեւաւորուող Բոլոր Բեւեռների Ներկայացուցիչների Յոյսը Սէկն է

Նիկոլ Փաշինեանի քաղաքական հակառակորդներն իշխանութեան դէմ պայքար ծաւալելիս փորձելու են հիմնական շեշտը դնել սոցիալական խնդիրների վրայ: Սա միանգամայն պարզ է, քանի որ Փաշինեանի հակառակորդները նախկին իշխանութեան տարբեր թեւերի ներկայացուցիչներն են: Իսկ նախկին իշխանութիւնները լաւ գիտեն, թէ ինչ աւերուած տնտեսութիւն են ժա-

նախկին իշխանութեան մասին, յայտարարել էր. «Երբ սառնարանում վիճակը շատ աւելի կը վատանայ, այդ դէպքում մի հատ կը լսենք ժողովրդին»: Ասել է թէ՛ Փաշինեանի դէմ ձեւաւորուող բոլոր բեւեռների ներկայացուցիչների յոյսը մէկն է. սպասում են, որ նոր իշխանութիւնները չկարողանան ժողովրդի սոցիալական վիճակը

նախկին իշխանութեան մասին, յայտարարել էր. «Երբ սառնարանում վիճակը շատ աւելի կը վատանայ, այդ դէպքում մի հատ կը լսենք ժողովրդին»: Ասել է թէ՛ Փաշինեանի դէմ ձեւաւորուող բոլոր բեւեռների ներկայացուցիչների յոյսը մէկն է. սպասում են, որ նոր իշխանութիւնները չկարողանան ժողովրդի սոցիալական վիճակը



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԲՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏԵՕՐԵՆ
ՎԱՅԷ ԱՋԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social
Democratic Hunchakian Party
of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Նշանակուեցան Հայաստանի Նոր Կառավարութեան 12 Նախարարները

Նախագահ Արմէն Սարգսեանի հրամանագրով նշանակուեցան Հայաստանի նոր կառավարութեան 12 նախարարները՝ հիմնուելով վարչապետ Նիկոլ Փաշինեանի առաջարկութիւններուն վրայ:

Զոհրաբ Մնացականեան նշանակուեցաւ Արտաքին գործոց նախարար

Դաւիթ Տոնոյեան՝ Պաշտպանութեան նախարար

Ֆելիքս Յոլակեան՝ Արտակարգ իրավիճակներու նախարար

Ատոմ ԶանՂուղազեան՝ Ֆինանսներու նախարար

Տիգրան Խաչատրեան՝ Տնտեսական զարգացման եւ ներդրումներու նախարար

Յակոբ Արշակեան՝ Տրանսպորտի, կապի եւ տեղեկատուական տեխնոլոգիաներու նախարար

Էրիկ Գրիգորեան՝ Բնապահպանութեան նախարար

Արտակ Զէյնալեան՝ Արդարադատութեան նախարար

Արսէն Թորոսեան՝ Առողջապահութեան նախարար

Զարուհի Բաթոյեան՝ Աշխատանքի եւ սոցիալական հարցերու նախարար

Սուրէն Պապիկեան՝ Տարածքային կառավարման եւ զարգացման նախարար

Արայիկ Յարութիւնեան՝ Կրթութեան եւ գիտութեան նախարար

Բոլոր նորանշանակ նախարարները, բացառութեամբ Զարուհի Բաթոյեանի, մաս կը կազմէին նախորդ կառավարութեան:

Վարչապետ Նիկոլ Փաշինեան յայտարարեց, որ իշխանութիւնը միտք չէ փոխած, նախարարութիւններու թիւը կրճատուելու կապակցութեամբ: Սակայն, քանի տա-

կաւին քննարկման տակ է կառավարութեան կառուցուածքային փոփոխութիւններու հարցը, նշանակուած է կառավարութեան անդամներու երկու երրորդը, որպէսզի գործադիր մարմինը ըստ օրէնքի ձեւաւորուած Նկատուի:

Փաշինեան Ֆեյսպուքեան ուղիղ եթերով անդրադառնալով կառավարութեան կառուցուածքային փոփոխութիւններուն, կարծիք յայտնեց, որ նախարարութիւններու մեծ թիւը աւելի մեծ կոռուպցիոն ռիսկեր կը պարունակէ:

«Միջազգային չափանիշներով ընդունուած է, որ կառավարման համակարգում, եւ ընդհանրապէս՝ ոչ միայն պետական, այլեւ կառավարման համակարգում, լինի 9-11 աշխատողին մէկ ղեկավար: Մեր պետական կառավարման համակարգում մենք ունենք այսպիսի իրավիճակներ, երբ, օրինակ, կան բաժիններ, օղակներ, որտեղ կան ղեկավարներ, բայց չկան, այսպէս ասած, ենթականեր: Օրինակ՝ բաժիններ նախարարութիւններում, որտեղ կայ բաժնի պետ եւ բաժնի պետի տեղակալ, բայց աշխատող չկայ», - ըսաւ վարչապետը:

Կառավարութեան ղեկավարը անդրադարձաւ նաեւ Սփիւռքի նախարարութիւնը լուծարելու հարցին, որու շուրջ քննարկութեան ալիք բարձրացած է: Ան յայտնեց, որ կը նախատեսուի Սփիւռքի նախարարութեան առանցքային աշխատակիցները տեղափոխել վարչապետի աշխատակազմ եւ վարչապետի յատուկ յանձնարարութիւններով ղեկավարը կը զբաղուի անոնց աշխատանքներու համակարգմամբ:

Մարտի 1-ի Զոհերու Հարազատները Վրդովուած Են

«Հինգերեքը ալիք» հեռուստաընկերութեան հեռարձակած «Գործ N' մարտի 1» փաստաւեւերագրական ֆիլմը վրդովեցուցած է Մարտի 1-ի զոհերու հարազատները:

2008-ի մարտի 1-ի արիւնալի իրադարձութիւններու ժամանակ սպանուած Գոռ Քլոյեանի հայրը «Ազատութեան» հետ զրոյցի ժամանակ պնդած է, որ ֆիլմը նուիրուած է Մարտի 1-ի գործով սահմանադրական կարգը տապալելու մէջ մեղադրուող Ռոպերթ Քոչարեանի պաշտպանութեան:

«Քոչարեանը փաստերը խեղաթիւրուած է: Դուք պատկերացնո՞ւմ էք՝ նա ինչ ձեւի սուտ է խօսում. ասում է, որ մենք Ազատութեան հրապարակում ընդամէնը կոչ արեցինք, որ գալիս ենք զէնքի ստուգման՝ տեսնենք վրաններում զէնք կայ, թէ չկայ: Ազդպիսի բան չի եղել, սուտ են անում: Նրանք միանգամից զազանավարի յարձակուել են ժողովրդի վրայ», - յայտարարած է Մարգիս Քլոյեանը:

Ֆիլմի հեղինակը ռուսաստանաբնակ հեռուստալրագրող Ռոման Պապայեանն է: Նկարահանող խումբը նախ Հայ Ազգային Գոնկերեսին (ՀԱԿ) դիմած է՝ Մարտի 1-ի զոհերու հարազատները «գտնելու» խնդրանքով: ՀԱԿ-ի անդամ Արմէն Խաչատրեանի ուղեկցութեամբ ալ անոնք այցելած են զոհերու հարազատներուն: Արմէն


Խաչատրեանը զրոյցի ժամանակ պատմած է, որ Ռոման Պապայեանի անունը ոչ մէկ անգամ չէ նշուած եւ հաւաստիացուցած են, թէ կ'ուզեն Մարտի 1-ի զոհերուն մասին ֆիլմ նկարահանել:

«Նկարահանողը ներկայացել է, որ ֆիլմը իրենն է, բեմադրիչը ինքն է, սենարիսթը ինքն է. խօսքը այդ Տմիթրիի մասին է: Ներկայացել է ու ասել է, որ ինքը ֆիլմ է նկարում միայն զոհերի մասին: Ու որեւէ քաղաքական բաղադրիչ, քաղաքական իրադարձութիւնների մասին որեւէ խօսակցութիւն չի եղել», - պատմած է Արմէն Խաչատրեանը՝ շարունակելով «- Ըստ հուլիսեան՝ մեր վստահութիւնը չարաշահելով, պարզուեց, որ նկարահանուել է մեղադրեալ Քոչարեանի պատուէրով ֆիլմ»:

Արմէն Խաչատրեանի խօսքով, պատահական չէ, որ ֆիլմը ցուցադրուած է Ռոպերթ Քոչարեանի անունան հետ կապուող «Հինգերորդ ալիք» հեռուստաընկերութեամբ եւ զուտ Քոչարեանի օգտին քարոզչութիւն իրականացնելու նպատակ կը հետապնդէ:

«Հինգերորդ ալիք» հեռուստաընկերութեան տնօրէն Յարութիւն Յարութիւնեանը «Ազատութեան» հետ զրոյցի ժամանակ ըսած է, որ ֆիլմի մասին տեղեկացած է Լազարեանեան ակումբի նիստի ժամանակ եւ առաջարկած է այն հեռարձակել:

Նոր Աղմկոտ Քրեական Գործ. Բազմաթիւ Նախկին Պաշտօնեաներ Ներգրաւուած Են



ՀՀ քննչական կոմիտէի Յատկապէս կարեւոր գործերով (ԾԿԳ) քննութեան գլխաւոր վարչութեան կողմէ յարուցուած է քրէական գործ՝ անտառային ֆոնտի հողերէն աւելի քան 50 հեքթար հողատարածքի սեփականաշնորհման ընթացքին պաշտօնատար անձանց կողմէ պաշտօնէական դիրքը չարաշահելու դէպքի առթիւ:

Նախնական տուեալներով՝ ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի վարչական սահմաններուն մէջ գտնուող անտառային ֆոնտի անտառածածկ հողերը Կոտայքի մարզպետը 04.12.2006-ին ՀՀ տարածքային կառավարման նախարարին հասցեագրուած գրութեամբ ներկայացուցած է որպէս ոչ անտառածածկ ու առաջարկած փոխել անոնց դասակարգումը՝ որոնց վրայ բացակայած են շահագրգիռ կողմերու հետ համաձայնեցուած ըլլալու վերաբերեալ տուեալները: Հրազդան համայնքն ալ իր հերթին հողատարածքը բաժանած է տարբեր հատուածներու ու հրապարակային սակարկութիւններով վաճառած տար-

բեր քաղաքացիներու:

Նիւթերու նախապատրաստման ընթացքին ձեռք բերուած են բաւարար փաստական տուեալներ՝ ՀՀ կառավարութեան՝ 2007 թուականի 5 Ապրիլի թիւ 422-Ն որոշման ընդունման ընթացքին շարք մը պաշտօնատար անձանց կողմէ, խմբային շահերէ ելլելով, պաշտօնէական դիրքը ծառայութեան շահերուն հակառակ օգտագործելու կամ ծառայողական պարտականութիւնները չկատարելու վերաբերեալ, ինչը անգուշութեամբ առաջացուցած է ծանր հետեւանքներ, ուստի եւ՝ ՀՀ Քննչական կոմիտէի Յատկապէս կարեւոր գործերով քննութեան գլխաւոր վարչութեան կողմէ յարուցուած է քրէական գործ:

Խնդրոյ առարկայ հողատարածքները աժան գինով վաճառուած են նախկին իշխանութեան ներկայացուցիչներուն: Անոնց շարքին են նախկին վարչապետ Յովիկ Աբրահամեանը, նախկին դատախազ Աղուան Յովսէփեանը, նախկին պատգամաւոր Աղուան Վարդանեանը եւ ուրիշներ:

Մանուէլ Գրիգորեանը Տեղափոխուած Է «Երեւան-Կեդրոն» Կալանավայր

ՀՀ Ազգային ժողովի նախկին պատգամաւոր, Երկրապահ կամաւորներու միութեան (ԵԿՄ) նախկին նախագահ Մանուէլ Գրիգորեան տեղափոխուած է «Երեւան-Կեդրոն» քրէակատարողական հիմնարկ:

ՀՀ վերաքննիչ դատարանը որոշում կայացուցած էր բաւարարելու Մանուէլ Գրիգորեանի գրաւով ազատ արձակելու առաջին ատենանի դատարանի որոշման դէմ Գլխաւոր դատախազութեան բողոքը:

Դեկտեմբեր 21-ին, Մանուէլ Գրիգորեանը՝ 25 միլիոն դրամ գրաւի դիմաց՝ կալանքէ ազատ արձակուած էր: Դեկտեմբեր 24-ին, Դատախազութիւնը վերաքննիչ բողոք ներկայացուցած էր Մանուէլ Գրիգորեանի խափանման միջոցի փոփոխութեան դէմ: Մանուէլ Գրիգորեանին մեղադրանք առաջադրուած է Քրէական օրէնագիրքի 235-րդ յօդուածի 2-րդ մասով՝ ապօրինի կերպով ռազմամթերք ձեռք բերելու եւ ալ անձերու հետ նախնական համաձայնութեամբ պահելու համար, ինչպէս նաեւ քրէական օրէնագիրքի 179-րդ յօդուածի 3-րդ մասի 1-ին կէտով՝ խումբ մը անձերու հետ նախնական համաձայնութեամբ իւրացման եղանակով իր վստահութեան յանձնուած առանձնապէս խոշոր չափերով ուրիշի գոյք յափշտակելու համար:



Ազգային ժողովի նախկին պատգամաւոր Մանուէլ Գրիգորեան

Յունիս 16-ին, Մանուէլ Գրիգորեանը ձերբակալուած էր, ապա՝ Յունիս 19-ին, Ազգային ժողովի պատգամաւորներու քուէարկութեամբ, գրկուած պատգամաւորական անձեռնմխելիութեան ու դատարանի որոշումով՝ կալանաւորուած: Կալանքի տակ գտնուելու ընթացքին՝ պատգամաւորի պաշտպանները բազմիցս բարձրաձայնած են անոր առողջական խնդիրներուն մասին՝ նշելով, որ իրենց պաշտպանեալի կեանքին վտանգ կը սպառնայ:

ԼՈՒՐԵՐ

ՀՀ Կառավարութեան Կողմէն Նախապատրաստուած ճանապարհային Քարտեզը Շատ Տպաւորիչ է. Սվիթսլաքի

Հայաստան-ԵՄ համաձայնագրի վաւերացման գործընթացը կ'ընթանայ նորմալ կերպով: Այս մասին «Մետիամաքսիմ» տուած հարցազրոյցի ժամանակ նշած է Հայաստանի մէջ ԵՄ պատուիրակութեան ղեկավար, դեսպան Փիոթր Սվիթսլաքին:

Անոր խօսքով, մինչ այժմ ԵՄ անդամ-պետութիւններու գրեթէ մէկ երրորդը արդէն վաւերացուցած է համաձայնագիրը, իսկ միւս երկիրներուն մէջ վաւերացման գործընթացը բաւականին առաջ գացած է:

«Կրնանք խօսիլ այլ պետութիւններու հետ վաւերացման գործընթացներու մասին, որոնք Եւրոպական միութեան հետ կնքած են աւելի յաւակնոտ համաձայնագրեր (Վրաստան, Մոլդովա): Սովորաբար բոլոր անդամ-պետութիւններու կողմէն համաձայնագրի վաւերացման համար կը պահանջուի 2-2.5 տարի: Այն, ինչ մենք ունինք հիմա, բաւականին նորմալ պատկեր է:

Առաւել կարեւոր է այն, որ չկան քաղաքական ազդակներ որեւէ անդամ-պետութեան կողմէ, որոնք կրնան մատնանշել հնարաւոր քաղաքական կամ այլ բարդութիւններու մասին: Այս տարի կայանալիք Եւրոպական խորհրդարանի ընտրութիւնները շատ կարեւոր իրադարձութիւն են, սակայն թոյլ տուէք չի շեղեն, որ Եւրոպական խորհրդարանը ձայներու ճնշող մեծամասնութեամբ՝ 500 կողմ եւ միայն 50 դէմ ձայներու յարաբերակցութեամբ արդէն տուած է իր համաձայնութիւնը համաձայնագրին: Եւրոպական խորհրդարանի կողմէն ՀՀ-ԵՄ Համապարփակ եւ ընդլայնուած գործընկերութեան համաձայնագրի հետ կապուած որեւէ պահանջներ չկան: Ուստի, մենք



Հայաստանի մէջ ԵՄ պատուիրակութեան ղեկավար, դեսպան Փիոթր Սվիթսլաքի

պէտք է ձեռնամուկ ըլլանք համաձայնագրի կիրարկման, քանի որ անոր դրոյթներու 80 տոկոսը արդէն իսկ ուժի մէջ մտած է», - ըսած է Սվիթսլաքին:

Դիտարկման, որ Արմէն Աշոտեանը, վկայակոչելով Պրիւքսէյի իր աղբիւրները, նշած էր, որ ԵՄ-ն գոհ է եղած հայկական կողմի ներկայացուցած ճանապարհային քարտեզի նախագծէն, Սվիթսլաքին արձագանգած է. «Հայաստանի կառավարութիւնը Եւրոպական միութեան ներկայացուցած է ճանապարհային քարտեզի նախագիծը, եւ այն ներկայիս կ'ուսումնասիրուի Պրիւքսէյի մէջ: Մենք խոստացած ենք տրամադրել մեր մեկնաբանութիւնները մինչեւ Յունուարի վերջ: Այս պահուն կրնամ նշել, որ Հայաստանի կառավարութեան կողմէ նախապատրաստուած փաստաթուղթը շատ սպաւորիչ է: Այն աւելի քան 100 էջ է՝ բաղկացած 300 գործնական քայլերէ, որոնք կառավարութիւնը կը նախատեսէ ձեռնարկել:

Հայաստանի Կողմէն Արտաքին Քաղաքական Արեւելունը Չփոխելը Գնահատելի է. Ռուս քաղաքագետ

Ռուսաստանի համար կարեւոր եւ գնահատելի է, որ չեղափոխութենէն ու իշխանափոխութենէն ետք Հայաստան իր արտաքին քաղաքական արեւելունը եւ ուղղութիւնը չէ փոխած «Արմէնբրես»-ի հաղորդմամբ՝ Հայաստանի մէջ Երեւան-Մոսկուա տեսակամուրջին նման տեսակէտ յայտնած է պատմական գիտութիւններու դոկտոր, Ռուսաստանի գիտութիւններու ակադեմիայի (ՌԳԱ) համաշխարհային տնտեսութեան եւ միջազգային յարաբերութիւններու հիմնարկի գլխաւոր գիտաշխատող, կովկասագէտներու գիտական միութեան նախագահ Ալեքսանդր Քոչիլովը:

«Հայաստանի ներկայիս իշխանութիւնները, երբ եկան իշխանութեան, փոխեցին իրենց՝ արտաքին քաղաքական ուղղութիւնը փոխելու մասին նախկին տեսակէտը: Այդ առարկայական է, քանի որ եթէ ելլենք Հայաստանի ազգային հետաքրքրութիւններէն, ապա կարելի է քաղաքական ուղղութիւնը տանիլ դէպի Ռուսաստանի հետ յարաբերութիւններու խզման», - ըսած է Քոչիլովը:

Անոր կարծիքով՝ Հայաստանն ու Ռուսաստանը հիմա կ'անցնին նոր յարաբերութիւններու ձեւաւորման փուլ, քանի որ եկած են նոր



Կովկասագէտներու գիտական միութեան նախագահ Ալեքսանդր Քոչիլով

ուժեր, փոխուած է առաջնորդներու սերունդը: Անոր խօսքով՝ հիմա չկայ, այսպէս ըսած, երկու իշխանութիւն: «Կայ խորհրդարան, որ կ'աջակցի վարչապետին, եւ բարեփոխումներու ճանապարհացուցած է: Թէ ինչպէս պիտի կազմակերպուին Ռուսաստանի հետ յարաբերութիւնները, արդէն յայտարարուած է, արտաքին քաղաքականութեան մօտեցումը պիտի չփոխուի: Այդ մէկը շատ կարեւոր եւ գնահատելի է Ռուսաստանի

Թուրքիոյ Խորհրդարանը Մերժած է Հրանդ Տինքի Սպանութեան Ուսումնասիրութեան Առնչութեամբ Կարօ Փայլանի Պահանջը

Թուրքիոյ քրտամէտ «Ժողովուրդներու դեմոկրատական» կուսակցութեան (ՀԴՔ) ընտրուած հայ պատգամաւոր Կարօ Փայլան խորհրդարանին Հրանդ Տինքի սպանութեան գործը ուսումնասիրող յանձնաժողով հիմնելու առաջարկ ներկայացուցած է:

Ըստ «Ermenihaber.am»-ի՝ հայ պատգամաւորը չի շեղցուցած է, որ Հրանդ Տինքի սպանութենէն անցած է 12 տարի, սակայն մինչ օրս ամբողջութեամբ չէ բացայայտուած:

Փայլան իր առաջարկով չի շատակած է նաեւ Տինքի նկատմամբ Թուրքիոյ քրէական օրէնսգիրքի տիրահաշակ 301-րդ (Թուրք ժողովուրդն ու Թուրքիոյ պետական կառուցները վիրաւորելը) յօդուածով իրականացուած հետաքննութիւնները, որոնք Տինքը դարձուցին ազգայնականներու թիրախ:

«Հրանդ Տինքը «Ակօս» թերթի մէջ Սապիհա Կէրքէչի մասին հրատարակած յօդուածէն (06.02.2004) ետք յայտնուեցաւ ազգայնամոլ շրջանակներու թիրախին մէջ: Յօդուածէն ետք, գլխաւոր շտապը յայտարարութիւն տարածեց, ապա Տինք կանչուեցաւ Պոլսոյ նահանգապետարան ու «զոհաւորուեցաւ»: Անկէ ետք ալ Տինքի նկատմամբ 2005 Ապրիլ 16-ին քրէական օրէնագիրքի 301-րդ յօդուածի (թրքութիւնը վիրաւորելու) յատկանիշներով դատաւարութիւն սկսաւ: Դատարանը դատաւճիռ կայացուց (6 ամսուան ազատազրկում): Բարձրագոյն դա-



Թուրքիոյ Խորհրդարանի հայ պատգամաւոր Կարօ Փայլան

տարանն ալ վճիռը հաստատեց՝ հակառակ մասնագիտական գեկոյցին ու դատախազի առարկութեան:

Փայլան նշած է, որ պետական մարմիններու տարբեր ներկայացուցիչներ տեղեկացուած եղած են Տինքի սպանութեան ծրագրին մասին, սակայն ոչինչ ըրած են զայն կանխելու համար, դեռ աւելին՝ Տինքի մարդասպանը ձերբակալուելէ ու Սամսունի ոստիկանութիւն տեղափոխուելէն ետք ոստիկանութեան աշխատակիցներուն կողմէ «հերոս»-ի պէս ընդունուած է: Փայլան չի շեղցուցած է, որ այդ մէկը ապացուցող լուսանկարները յայտնուած էին մամուլի մէջ:

«Անհրաժեշտ է, որ խորհրդարանը դէպքի պատասխանատունները բացայայտելուն աջակցելու, հանրային խիղճը հանգստացնելու ու այդպիսով նման ողբերգութիւնները կանխելու կամք ցուցաբերէ: Այդ պատճառով ալ կ'ուզենք եւ կը պահանջենք, որ խորհրդարանի մէջ ուսումնասիրող յանձնաժողով ստեղծուի», - եզրափակած է Փայլան:

Human Rights Watch Դրական Գնահատականներ Տուած է Հայաստանի Ներկայ Իշխանութիւններուն Մասին

«Մարտի 1»-ի գործով նախորդ իշխանութիւններու օրօք իրականացուած հետաքննութիւնը միակողմանի էր, չաչտարարած է Human Rights Watch հեղինակաւոր կազմակերպութիւնը հրատարակած տարեկան գեկոյցին մէջ՝ փաստելով, որ այդ հետաքննութեան արդիւնքով դատարանի առջեւ կանգնած էին միայն ընդդիմադիրները, 52 ցուցարար յայտնուած էր բանտը:

Հայաստանի նոր իշխանութիւնները վերակենդանացուցին այդ հետաքննութիւնը՝ մեղադրանքներ ներկայացնելով երեք նախկին բարձրաստիճան պաշտօնեաներու, այդ շարքին՝ նախկին նախագահ Ռոպերթ Քոչարեանին, սահմանադրական կարգը տապալելու համար, արձանագրած է միջազգային կառույցը:

«Հայաստանեան նախորդ ընտրութիւնները մթազնուած էին ընտրակաշառքի, քաղժառանգութեան ու մասնաւոր հատուածի ներկայացուցիչներու հանդէպ ճնշումներով, ինչը դարձած էր զարնան սկսած բողոքի ցուցերու պատճառներէն մէկը», - նշած է գեկոյցը,

համար», - ըսած է Քոչիլովը: Ան նաեւ կարեւորած է, որ

շարունակելով՝ Սեպտեմբերին՝ իշխանափոխութենէն ետք արդէն, Փաշինեանի կառավարութեան առաջարկութեամբ խորհրդարանը օրէնսդրական փոփոխութիւններ ընդունեց, որոնց հիմամբ ընտրութիւններու ժամանակ կաշառք առաջարկելու եւ վերցնելու համար կը սահմանուի քրէական պատիժ՝ մինչեւ վեց տարուան ազատազրկմամբ: «Դեկտեմբերին իրականացուած ընտրութիւնները, միջազգային դիտորդներու գնահատականով, կը վաճելին հասարակութեան լայն վստահութիւնն ու գերծէին նախորդ ընտրութիւններու ժամանակ արձանագրուած խախտումներէն», - ընդգծած է Human Rights Watch-ը:

Քննադատելով նախորդ իշխանութիւնները՝ Human Rights Watch-ը միաժամանակ գովասանքի խօսքեր հնչեցուցած է նոր իշխանութիւններուն հասցէին՝ իրաւապահներու կողմէ կիրառուած բռնութիւններու՝ տարիներ շարունակ սառեցուած գործերը աւարտին հասցնելու եւ մեղաւորները պատժելու համար:

Հայաստանի մէջ փոխակերպումները յաջող ընթանան:

Մոսկուայի Քաղաքային Իշխանութիւնը Հայ Կաթողիկէ Համայնքին Հողատարածք Տրամադրած Է



Մոսկուայի քաղաքային իշխանութիւնը հայ կաթողիկէ համայնքին հողատարածք տրամադրած է՝ եկեղեցի կառուցելու համար:

Այս մասին կը տեղեկացնեն Հայաստանի, Վրաստանի, Ռուսիոյ եւ Արեւելեան Եւրոպայի հայ կաթողիկէ առաջնորդարանին՝ փաստելով, որ Հայաստանի, Վրաստանի, Ռուսիոյ եւ Արեւելեան Եւրոպայի հայ կաթողիկէ առաջնորդ Արհ. Տ. Ռաֆայէլ արքեպիսկոպոս Մինասեանի՝ Յունուար 11-ին Ռուսիա կատարած հովուական այցէն ետք՝ Մոսկուայի քաղաքային իշխանութիւնները հրապարակած են տեղեկատուութիւն, ըստ որուն քաղաքապետարանի քաղաքաշինական-հողային հարցերու յանձնաժողովը հաւանութիւն տուած է հայ կաթողիկէ համայնքին յանձնելու հողատարածք՝ եկեղեցի կառուցման համար:

Հողատարածքը Մոսկուայի

Հարաւային Բուտով շրջանին մէջ է եւ կը կազմէ 0,7 հա: Յանձնաժողովի քարտուղար Անասթասիա Փէոդուա ըսած է. «0,7 հա հողատարածքը կը տրամադրուի Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ ժողովրդապետութեան՝ 9 տարի անհատոց օգտագործման իրաւունքով՝ եկեղեցւոյ եւ հոգեւոր-մշակութային կեդրոնի նախագծման եւ կառուցման համար»:

Եկեղեցւոյ ընդհանուր մակերեսը կրնայ կազմել մինչեւ 1000 քմ, իսկ հոգեւոր կեդրոնը՝ մօտ 850 քմ: Նոր կառուցուելիք եկեղեցին պիտի ըլլայ Մոսկուայի առաջին հայ կաթողիկէ եկեղեցին ողջ պատմութեան ընթացքին: Ըստ պաշտօնական տուեալներուն՝ Մոսկուայի մէջ այժմ կ'ապրի մօտ 500 հայ կաթողիկէ ընտանիք, իսկ ամբողջ Ռուսիոյ մէջ՝ հայ կաթողիկէներուն թիւը մօտ 100,000 է:

Հայաստանը Պելարուսիոյ Համար Եղած Է Եւ կը Մնայ Վստահելի Գործընկեր. Լուկաշենքօ

Պելառուսիոյ մէջ Հայաստանի դեսպան Արմէն Ղեւոնդեան իր հաւատարմագրերը յանձնած է Պելառուսիոյ նախագահ Ալեքսանտր Լուկաշենքոյին: Այս մասին կը յայտնէ պելառուսական «Պելթա» գործակալութիւնը:

«Հայաստան Պելառուսիոյ համար եղած է եւ կը մնայ յուսալի գործընկեր, որուն հետ մեզի կը կապէ բազմաձրագիր համագործակցութիւնը, ինչպէս՝ Եւրասիական տնտեսական միութեան եւ Հաւաքա-

կան անվտանգութեան պայմանագրի կազմակերպութեան (ՀԱՊԿ) մէջ», - ըսած է Պելառուսի նախագահը:

Ան ընդգծած է հայ պելառուսական յարաբերութիւններու բաղկացուցիչ առեւտրատնտեսական համագործակցութիւնը ընդլայնելու եւ պատրաստակամութիւն յայտնած է մասնակցելու իւրաքանչիւր նախագիծի, որ կը հետաքրքրէ Հայաստանցի գործընկերները, նաեւ՝ Հայաստանի տարածքին:

Ոգեկոչած են Հրանդ Տիմքի Յիշատակը

Շարունակուած էջ 1-էն

ուած խօսքով հանդէս եկած է 1948 թուականին ձերբակալուած եւ անհետ կորած թուրք նշանաւոր արձակագիր Սապահատտին Ալիի դուստրը՝ Ֆիլիզ Ալին: «12-րդ անգամ ըլլալով հաւաքուած ենք բոլոր ձեռքերով հիմնած, մեծցուցած «Ակոս»-ի շէնքին առջեւ, քեզ մեզմէ խլած խաւարին դէմ կանգնելու, քու եւ ընտանիքիդ կողքին ըլլալու համար», - ըսած է ան:

Տիմքի մահուան հերթական տարեւրցի կապակցութեամբ ուղերձ յղած են նաեւ շուրջ մէկ տարի կալանաւորուած թուրք յայտնի հասարակական գործիչ, «Անատրոլ Բուլթուր» հասարակական կազմակերպութեան նախագահ Օսման Քաւալան, թուրքիոյ լրագրողներու միութեան նախագահ Թուրկայ Օլճայթին:

Ինչպէս ամէն տարի, այս տարի եւս Տիմքը յիշելու եկած մտերիմներու պահանջը մէկն էր՝ արդարութիւն:

«12 տարի է արդարութեան համար կը պայքարինք, բայց, դժբախտաբար, այսօր շատ հեռու ենք մեր նպատակէն», - «Ազատութեան» հետ գրոյցի ժամանակ նշած է Թուրքիոյ խորհրդարանի ժողովուրդներու ղեմովրատական կուսակցութեան հայագի պատգամաւոր Կարօ Փայլանը, որ օրերս առաջարկած էր Տիմքի սպանութեան գործի քննութիւն սկսիլ թրքական Մէճլիսէն ներս: «Բայց մենք ալ այս արդարութեան պայքարը պիտի շարունակենք, եւ օր մը, այդ օրը շատ մօտ չէ, բայց պիտի գայ օր մը՝ Հրանդ Տիմքի եւ Յեղասպանութեան համար արդարութիւն պիտի հաստատենք», - ըսած է Փայլան:

Այս Տարի Հայաստանի Մէջ Պիտի Ստեղծուի Ելեկտրական Մեքենաներու Լիցքաւորման Կայաններու Ցանց



Այս տարի պիտի ստեղծուի ելեկտրական մեքենաներու լիցքաւորման կայաններու ցանց՝ 23 լիցքաւորման կայանով, որոնք հասանելի պիտի ըլլան Հայաստանի ողջ տարածքին:

Կառավարութիւնը հաւանութիւն տուած է Յուլիս 1-էն ելեկտրական շարժիչով մեքենաներու եւ մոտոցիկլետներու ներկրումը Աւելացուած արժէքի հարկի (ԱԱՀ) վճարումէն ազատելու վերաբերեալ օրէնքի նախագիծին: Արտօնութիւնը պիտի գործէ մինչեւ Յուլիս 2022 թուական:

Եւրոփու. Սպանիոյ Եւ Պելճիքայի Մէջ Բացայայտուած Հայկական Ցանցախումբերը Կապի Մէջ Եղած Են

Եւրոմիութեան ոստիկանութիւնը նոր մանրամասներ հաղորդած է անցած շաբաթ Սպանիոյ մէջ ձերբակալուած հայկական յանցախումբի վերաբերեալ, որուն անդամները կը մեղադրուին արհեստավարժ թենիսիսթները կաշառելու եւ պայմանաւորուած խաղեր կազմակերպելու մէջ:

Associated Press-ի հետ գրոյցի ժամանակ Եւրոփուի տնտեսական յանցագործութիւններու բաժնի պետ Փետրօ Ֆելիչիօն յայտնած է՝ պարզուած է, որ Սպանիոյ մէջ ձերբակալուած խմբաւորումը կապի մէջ եղած է անցած տարի Պելճիքայի մէջ յայտնաբերուած հայկական յանցախումբի հետ:

Ըստ եւրոպացի քննիչներուն, խաղադրոյքներով զբաղող այդ խումբերը հարիւրաւոր պայմանաւորուած խաղեր կազմակերպած են Եւրոպայի տարբեր երկիրներու մէջ, աւելի քան 100 մարզիկներ կաշառած, ընդ որում, ոչ միայն թենիսի ասպարէզի մէջ. լուրջ կասկածներ կան, որ անոնք յանցաւոր կապի մէջ եղած են նաեւ վոլէյպոլիսթներու ու պասքեթպոլիսթներու հետ, ըսած է Եւրոփուի պաշտօնէան:

Ամիսներ շարունակուած քննութենէն ետք իրաւապահները նաեւ անուններ հրապարակած են:

Ըստ այդմ՝ Պելճիքայի մէջ գործող յանցախումբի առաջնորդներէն մէկը եղած է 28-ամեայ Գրիգոր Սարգսեանը, որուն կաշառուած մարզիկները կոչած են «Մասեթրօ»: Վերջինս ձերբակալուած է եւ այժմ կը գտնուի պելճիքական բանտի մէջ: Անոր դէմ ցուցմունքներ ստանալու, փաստեր հաւաքելու համար, ըստ Associated Press-ի աղբիւրներու, պելճիքացի քննիչները այս շաբաթ մեկնած են Ֆրանսա, ուր գործով անցնող չորս թենիսիսթ ազատազրկուած էր: Անոնցմէ առնուազն մէկը խոստովանած է, որ մօտ երկու տասնեակ պայմանաւորուած խաղ իրականացուցած է Սարգսեանի պատուէրով:

Եւրոփուի ներկայացուցիչը, իր հերթին, նշած է, որ այժմ քննութիւն կ'ընթանայ, պարզելու համար, թէ ինչ չափով համագործակցած են Սպանիոյ եւ Պելճիքայի մէջ բացայայտուած յանցախումբերը, արդեօք եղած է մէկ պարագլուխ, որուն բոլորը ենթարկուած են, թէ՞ կապը եղած է ստորին մակարդակներու վրայ՝ տեղեկատուութեան փոխանակման ու փողերու լուցման համար: «Սակայն որ անոնք իրար հետ կապի մէջ եղած են, յստակ է», - ըսած է Եւրոփուի տնտեսական յանցագործութիւններու բաժնի ղեկավար Փետրօ Ֆելիչիօն:

700 Միլիոն Եւրօ Հայաստանին

Շարունակուած էջ 1-էն

տանին պիտի յատկացուի աւելի քան 700 միլիոն եւրօ: Փաստաթուղթի հեղինակներու կողմէն մատնանշուող հայաստանեան առաջնահերթ ծրագրերուն մեծ մասը առնչութիւն ունին «Հիւսիս-Հարաւ» միջանցքին հետ:

Հրապարակուած փաստաթուղթէն մասնաւորաբար կը տեղեկանանք, որ «Հիւսիս-Հարաւի» Արտաշատ-Ազարակ հատուածի շինարարութեան համար նախատեսուած է 450 միլիոն եւրօ յատկացնել: 41

միլիոն եւրօ պիտի յատկացուի Գիւմրի-Պաւլա, եւս 7,5 միլիոն՝ Երեւան-Վանաձոր ճանապարհներու վերանորոգման: Բացի այդ, ԵՄ-ն եւ Համաշխարհային դրամատունը կը նախատեսեն շուրջ 15 միլիոն եւրօ տրամադրել Մեղրիի սահմանային անցակէտի արդիականացման համար:

Ընդհանուր առմամբ, ծրագրի հեղինակները յատկացուող 13 միլիարդ եւրօյով կը նախատեսեն մինչեւ 2030 թուականը 98 լայնածաւալ ծրագիր աւարտին հասցնել:

Սերժի Լուրիսը



ԹԱԹՈՒԼ ՅԱՎՈՒԲԱՆ

Հայաստանի երկրորդ նախագահ, 2008-ին Սահմանադրական կարգը տապալելու մէջ մեղադրուող Ռոբերտ Քոչարեանի շուրջ արդէն ամիսներ տեւող զարգացումներում երրորդ նախագահ Սերժ Սարգսեանի լուրջ լուրջ ապշեցնող է:

Մի կողմ էնք թողնում, թէ ինչքանով է հիմնադր Քոչարեանի նկատմամբ առաջադրուած մեղադրանքը եւ արդեօք Հայաստանի արդարադատութիւնը ի վիճակի է լինելու դուրս գալ այս գործի տակից: Խօսքը հենց արդարադատութեան մասին է, այլ ոչ վրէժխնդրութեան, մի բան, որ եղել է Քոչարեան-Սարգսեան 20-ամեայ իշխանութեան բաղադրիչներից:

Սերժի լուրջ լուրջ անբացատրելի է քաղաքական, բարոյական ու մարդկային առումներով:

Եթէ Քոչարեանը փորձել է Սահմանադրական կարգը տապալել, ապա դա արել է ոչ միայն իր, այլեւ, առաջին հերթին իր երկար տարիների քաղաքական գիւնակից Սերժ Սարգսեանի համար: Աւելի պարզ, Մարտի 1-ի թիւ մէկ շահառուն հենց Սերժ Սարգսեանն էր: Անկասկած, Սերժ Սարգսեանը փողոցի գործիչ չէ, որպէսզի դուրս գալ փողոց՝ ի պաշտպանութիւն իր երկար տարիների քաղաքական գիւնակից Քոչարեանի: Աւելին, Սերժը կարող է գոյատեւել ամէնուր, բայց ոչ փողոցում, քանի որ փողոցում նա ունի գրօ աջակցութիւն, եւ փողոցը, մեծ հաշուով, նրա ամենավտանգաւոր հակառակորդն է: Փողոցից բացի, կան այլ միջոցներ, որոնք, ցանկութեան դէպքում, Սարգսեանը կարող էր օգտագործել՝ ի պաշտպանութիւն Քոչարեանի:

Մէկ այլ իրողութիւն կար նրա նախագահութեան տասը տարիներին: Սերժի շուրջ եւ նրա փեսայի ձեռքում գտնուող մեղիան անուղղակի կերպով Մարտի 1-ի պատասխանատուութիւնը թողնում էր Քոչարեանի վրայ: Տասը տարիների ընթացքում փորձ արուեց Մարտի 1-ի արիւնը մաքրել Սերժի վրայից եւ այն թողնել միայն Քոչարեանի վրայ: Այս հարցում, կրկին անուղղակի, այսօր Սերժին օգնում է նաեւ Նիկոլ Փաշինեանի արդարադատութիւնը: Քրէական գործեր են յարուցուել Քոչարեանի եւ Մարտի 1-ի ուժայինների վրայ, սակայն Սերժ Սարգսեանը անգամ չի կանչուել հարցաքննութեան:

Սերժի լուրջ լուրջ անբացատրելի է նաեւ բարոյական ու մարդկային առումով: Եթէ անգամ Քոչարեանը չլիներ իր ընկերը, եթէ անգամ իշխանութիւնը ստացած չլիներ Մարտի 1-ի արեան ճանապարհով, ապա, միեւնոյնն է, որպէս

Փաշինեան.

«Մենք Չախողելու Իրաւունք Չունինք»

Ինչպէս եւ ինչու տեղի ունեցաւ հայաստանեան յեղափոխութիւնը, ինչ փոխուեցաւ իշխանափոխութենէն ետք եւ ուր կ'երթայ նոր Հայաստանը. Տաւոսի համաշխարհային համաժողովի կայքին մէջ հրապարակուած յօդուածին մէջ այս հարցերու շուրջ կը խօսի Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանը, որ այս կիրակի առաջին անգամ ըլլալով պիտի մասնակցի հեղինակաւոր այդ միջոցառման:

Իր հեղինակած ծաւալուն յօդուածին մէջ վարչապետը ընդգծած է՝ անցեալ տարի Հայաստանի մէջ տեղի ունեցած փոփոխութիւնները իրենց տեսակով եւ բնոյթով պատմական են:

«Թաւաշեայ յեղափոխութեամբ մեր երկրում ժողովրդավարութիւն հաստատուեց»- գրած է Նիկոլ Փաշինեանը, աւելցնելով, որ շարժումը միաւորած է ոչ միայն հայաստանցիները, այլ նաեւ սփիւռքի մէջ ապրող հայերը:

«Դա բացարձակ ոչ բռնի, առանց զոհերի յեղափոխութիւն էր. սէրը, եղբայրութիւնը, հանդուրժողականութիւնը հայկական ազգային շարժման կարգախօսն էին», - յիշեցուցած է այդ շարժումը առաջնորդած Փաշինեանը:

Միջազգային ամենահեղինակաւոր հարթակներէն մէկուն մէջ հրապարակուած այդ յօդուածին մէջ Հայաստանի առաջնորդը հերթական անգամ յայտարարած է, որ հայաստանեան ներքին փոփոխութիւնները չեն անդրադարձած երկրի արտաքին քաղաքականութեան վրայ, պաշտօնական Երեւանը կը շարունակէ հաւատարիմ մնալ իր միջազգային պարտաւորութիւններուն, աւելին՝ Փաշինեանի համոզմամբ՝ ժողովրդավարական Հայաստանը այժմ աւելի մեծ ներդրում կրնայ ունենալ ռազմաքաղաքական ու տնտեսական դաշինքներուն մէջ, որոնց կ'անդամակցի:

րուն մէջ, որոնց կ'անդամակցի:

Անգլիալեզու իր յօդուածին մէջ Հայաստանի նորընտիր ղեկավարը, խօսելով հայաստանեան համաժողովրդական շարժման դրդապատճառներուն մասին, գրած է. - «1988 թուականին Հայաստանը եղել է առաջին երկրներից մէկը, որը խարխիւլ է քոմունիստական ռեժիմի հիմքերը՝ համազգային ժողովրդական շարժման միջոցով»:

«Երկրորդ՝ Հայաստանը դէպի ծով ելք չունեցող, սահմանափակ բնական ռեսուրսներով ու բարդ աշխարհաքաղաքական տարածաշրջանում գտնուող երկիր է, որը անվտանգութեան լուրջ մարտահրաւէրներ ունի», - թուարկած է Հայաստանի ղեկավարը աւելցնելով նաեւ նախկին ռեժիմն ալ իր հերթին երկիրը փակուղի մտցուցած է: Միակ ելքը ժողովրդավարութեան հաստատումն էր, իսկ անոր համար, Փաշինեանի խօսքերով, ժամանակ ու մտածողութեան փոփոխութիւն կը պահանջէր: - «Առաջին քայլերն արուած են», - փաստած է Հայաստանի առաջնորդը: - «Ժողովրդի աննախադէպ աջակցութեամբ Հայաստանի օրինական կառավարութիւնը հաստատեց բարեփոխումների յաւակնոտ ծրագիրը՝ կաշառակերութեան դէմ պայքար, մենաշնորհների վերացում, տնտեսական ու քաղաքական հաւասար մրցակցութեան ապահովում, աղքատութեան յաղթահարում, անկախ դատական համակարգ»:

Եզրափակելով յօդուածը՝ Նիկոլ Փաշինեանը գրած է. - «Մենք վճռական ենք՝ հասնելու մեր վերջնական նպատակին՝ ունենալ կայուն, ժողովրդավարական եւ տնտեսապէս զարգացող երկիր՝ հիմնուած օրէնքի գերակայութեան եւ

Շար.ը էջ 18

Շար.ը էջ 18



Կազմակերպութեամբ ՄԴՀԿ Սապահ Գիւլ Մասնամիւլիի

Valentine's Day

Միջերկրական Ճաշեր, ներստեայ Գինի և զովսցուցիչ:

Տեղի կ'ունենայ Շաբաթ 9 Փետրուար 2019, երեկոյեան ժամը 7:00-էն սկսեալ:

Մուտքի նուէր՝ \$60

Վայր՝ 9537 Shoshone Ave, Northridge, CA 91325

Տեղերը սապահովելու համար՝

Հեռ. 818-434-4950, 559-313-0147

Join us for a night of divine Mediterranean cuisine

Wine and soft drinks are included

It's our annual

Valentine's Day

Donation \$60



Հրանդ Տինք Ոգեկոչուեցաւ Լոս Անճելոսի Մէջ



«Ակօս» թերթի խմբագիր Հրանդ Տինքի նահատակութեան 12րդ տարելիցին առթիւ, Կիրակի, 20 Փետրուար 2019, յուշ երեկոյ մը կազմակերպուած էր Լոս Անճելոսի Պոլսահայ Միութեան կողմէ, որ տեղի ունեցաւ միութեան հանդիսասրահին մէջ:

Խիզախ պայքարը անդրադարձաւ հայ մամուլի ազգանուէր ծառայութիւններուն եւ զեղեցիկ համադրումով մը վիճակագրական համապարեակ ու շահեկան տեղեկութիւններ տուաւ մեր դարաւոր մամուլի տարբեր բաժանմունքներուն մասին, սալիկներու ցուցադրութեամբ:



Բազմահարիւր ներկաներուն հետ միջոցառման մասնակիցներուն մէջ էին Թեմիս Բարեջան առաջնորդ Գերշ. Տ. Յովնան արք.ի ներկայացուցիչ Հոգեշ. Տ. Տաճատ Ծ. Վրդ. Եարտրմեան, նախկին առաջնորդ Գերշ. Վաչէ արք. Յովսէփեան, Հայ Աւետ. Եկեղեցիներու միութեան կողմէ Վեր. Ճօ Մաթոսեան, գոնկրեսական Պրատ Շերման, ինչպէս նաեւ հայ աւանդական կուսակցութիւններու, մամուլի եւ հասարակական տարբեր կազմակերպութեանց ներկայացուցիչներ: Պոլսահայ Միութեան Մշակութային Յանձնախումբի ատենապետ Տոքթ. Յովհաննէս Աւետիքեանի բարի գալուստի խօսքէն ետք ներկաները յոտնկայս լուծութեամբ յարգեցին յիշատակը նահատակ Հրանդ Տինքին, որուն հետեւեցաւ հոգեհանգստեան կարճ արարողութիւն մը, մասնակցութեամբ ներկայ հոգեւորականներուն:

Օրուան հանդիսավար եւ Պոլսահայ Միութեան ատենապետ իրաւաբան Կարո Ղազարեան իր ելոյթին մէջ բարձր գնահատեց Հրանդ Տինքի տեսլականն ու անոր օգտաշատ աշխատանքները, փոքրամասնութիւններու իրաւունքներու պաշտպանութեան գծով եւ աւելցուց. «Պիտի գալ օրը երբ հայերը պիտի տեսնեն իրենց իղձերու իրականացումը»: Հրանդ Տինքի յիշատակը ոգեկոչող տպաւորիչ ելոյթով մը հանդէս եկաւ նաեւ գոնկրեսական Պրատ Շերման: Ինք եւս դատապարտեց Թուրքիոյ մէջ գործուած անարդարութիւնները եւ հաւաստիացուց որ պիտի հետապնդէ հայոց ցեղասպանութեան եւ պահանջատիրութեան արդար

Մրտագին Կոչ Մեր Ժողովուրդին Նողկալի Սրբապօղոթիւն Հայ Առաքելական Եկեղեցւոյ Բարձրաստիճան Հոգեւորականներուն Հանդէպ

Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան հոգեւոր Տօներուն առթիւ, մեր ժողովուրդը ծովածաւալ բազմութեամբ մը ողողած էր Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի Սրբոց Ղեկնդեանց Մայր Տաճարը եւ անոր յարակից մասնաբաժինները:

Օրուան պատարագին էր Թեմիս սիրեցեալ Առաջնորդ, մեր եկեղեցւոյ փայլուն կղերականներէն Գերշ. Տ. Յովնան արք. Տէրտէրեան:

Դժբախտաբար, այդ օրը եւ անկէ քանի մը օր առաջ, Մայր Տաճարի դիմացի մայթին մօտ, երկու ոչ հայ պատանիներ անզերէն եւ հայերէն լեզուներով պատատ մը բռնած էին, պահանջելով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ մեր Առաջնորդին հրաժարականը:

Այս արարքի ետին կանգնած էր մամուլը բարոյագուրդի գործիչ մը, որ այս պատանիներուն ուղղութիւն կուտար եւ նկարահանումներ կ'ընէր՝ ձախ-աջ վազվզելով:

Այդ լրագրող կոչեցեալը եւ իրեն նիւթապէս հովանաւորողները, անամօթաբար այդ-պիսի պիղծ եւ անշնորհ գործի լծուած էին, մեր Սուրբ Եկեղեցւոյ կղերականները օտարնե-րուն աչքին առջեւ նսեմացնելու:

Նմանապէս, այս լրագրողը հայկական հեռատեսիլի մզլտած յայտագրէ մը քանի մը ելոյթ ունենալով, ստապատիր, անհիմն մեղադրանքներով բացարձակապէս սուտ տեղեկութիւններ կը հաղորդէր:

Յիշենք, թէ Արեւմտեան Թեմի Առաջնորդը, թեմի 51 ծուխերու

կողմէ ընտրուած պատգամաւորական ժողովի եւ Աստուծոյ կամքով կ'ընտրուի, եւ ոչ թէ քանի մը անձերու ձաբուտութեամբ այդ պաշտօնին կը հասնի:

2003-ին, մեր թեմի Առաջնորդ ընտրուեցաւ Գերշ. Տ. Յովնան արք. Տէրտէրեան: Այդ թուականէն ի վեր Արեւմտեան թեմը իր հոգեւոր, ազգային, մշակութային, հայրենաշէն գործունէութիւններով ԻՐ ՈՍԿԵԴԱՐԸ Կ'ԱՊՐԻ: Անձ մը աչքով կոյր եւ մտքով կաղ պէտք է որ ըլլայ, չտեսնելու համար Արեւմտեան թեմի փառաւոր վիճակը եւ բազմաթիւ հաւատացեալներու ներկայութիւնը մեր եկեղեցիներէն ներս: Այս բոլորը եղած են մեր երիտասարդ, տքնաջան եւ Աստուածատուր տաղանդներով օժտուած սիրելի Առաջնորդին ղեկավարութեամբ:

Այսու գիրով, Լոս Անճելոսի իրաքահայերու Ընտանեկան Միութիւնը խստօրէն կը դատապարտէ մեր Սուրբ Եկեղեցին եւ մեր թանկագին, շինարար, բազմավաստակ Առաջնորդին նսեմացնող այս բամբասանքները, եւ մեր անվերապահ եւ ամբողջական զօրակցութիւնը կը յայտնենք մեր թեմի արժանաւոր խորհրդակցի, աղօթելով որ Աստուած պահէ եւ պահպանէ եւ ծառայութեան երկար օրեր պարգեւէ մեր եկեղեցւոյ հոգեւոր եւ աշխարհիկ բոլոր սպասարկողներուն:

ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ԻՐԱՔԱՀԱՅԵՐՈՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՄԻՍԻՍԻ ԵՎ ՄԻՍԻՍԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՐԱԿԻՑ ՄԱՐՄԻՆՆԵՐ

դատի իրաւունքները: Յուշ երեկոյի զեղարուեստական բաժնին մէջ պատշաճ ասմունքով ելոյթ ունեցան Աստիկ Տատուրեան, տուտուկի ընկերակցութեամբ Ալպեռ Վարդանեանի:

Ոգեկոչական սոցն միջոցառումի աւարտին ետք տեղի ունեցաւ օրուան դասախօսներու գիրքերու վաճառք եւ պատշաճ հիւրասիրութիւն:

Գ.Մ.

ABRIL BOOKSTORE
ARMENIAN CILICIA EVANGELICAL CHURCH PASADENA

present
A special book event

The Sins of the Fathers

Turkish Denialism and the Armenian Genocide

The Sins of the Fathers

with author
Siobhan Nash-Marshall

THURSDAY, JANUARY 31, 2019 AT 7:30 PM
Abril Bookstore
415 E. Broadway, Glendale, CA 91205

FRIDAY, FEBRUARY 1, 2019 AT 7:30 PM
Armenian Cilicia Evangelical Church
339 S. Santa Anita Ave., Pasadena, CA 91107
For more info, contact 818-303-5566
FREE ADMISSION • REFRESHMENTS TO FOLLOW

Արայիկ Յարութիւնեան Այցելել է Լոս Անջելեսի Հայկական Դպրոցներ



Ամերիկայի Միացեալ Նահանգներում աշխատանքային այցով գտնուող ՀՀ կրթութեան եւ գիտութեան նախարարի պաշտօնակատար Արայիկ Յարութիւնեանն այցելել է Լոս Անջելեսի հայկական դպրոցներ: Արայիկ Յարութիւնեանը նախ այցելել է ԱՐ. ԴԻ. Վայթ տարրական դպրոց, որ-

զարգացումների համատեքստում, երբ առաջնահերթ է դարձել ԱՄՆ գիտակրթական եւ տեխնոլոգիական ներուժի ներգրաւումը մեր երկրում տեղի ունեցող փոփոխութիւններին: Նախարարի պաշտօնակատարը շնորհակալութիւն է յայտնել ջերմ ընդունելութեան համար՝ ընդգծելով սփիւռքի հայկա-



տեղ կրթութիւնն իրականացում է երկու լեզուներով՝ հայերէն եւ անգլերէն: Նախարարի պաշտօնակատարը հանդիպել է դպրոցի պատասխանատուների եւ տնօրէնի հետ, քննարկել մի շարք հարցեր, այդ թւում՝ դասագրքերի եւ ուսուցիչների վերապատրաստումների վերաբերեալ:

կան համայնքների մասնակցութիւնը Հայաստանում տեղի ունեցած յեղափոխութեանը: «Վերջին օրերին զարմանքով նկատել եմ, որ սփիւռքի մեր հայրենակիցները՝ փոքրից մինչեւ մեծ, սկսել են ապրել բացառապէս հայրենիքի խնդիրներով, նրանք ուշադիր հետեւել եւ, ըստ էութեան, մասնակից են դարձել յեղափոխութեանը. փոքրերը երգում են յեղափոխութեան երգերը, հարցեր տալիս դրա առաջնորդների մասին», - նշել է Արայիկ Յարութիւնեանը:

Այնուհետեւ նախարարի պաշտօնակատարն այցելել էն ՀԲԸՄ-ի Մանուկյան-դեմիրճյան վարժարան, ծանօթացել ուսումնական ծրագրերին, ինչպէս նաեւ շրջել դպրոցի լաբորատորիաներում: Այցի

Ռոթըրի Միջազգային Կազմակերպութեան 29-րդ Տարեկան Խաղաղութեան Նուիրում Դանագումար

Ռոթըրի միջազգային կազմակերպութեան 29-րդ տարեկան Խաղաղութեան նուիրում համագումարը տեղի պիտի ունենայ Շաբաթ, Փետրուար 23, 2019-ին առաւօտեան ժամը 8:00-էն 12:00 Լա Վըրն համալսարանի Մորկըն հանդիսասրահին մէջ:

Գլխաւոր բանախօսն է Միացեալ Նահանգներու փոխադրամիջոցներու նախ-կին նախարար Ռէյ Լահուտ:

Նաեւ ելոյթ պիտի ունենան համաշխարհային Խաղաղութեան Զատագով յայտնի դէմքեր:

Բացման խօսքով ելոյթ պիտի ունենայ սոյն կազմակերպութեան ատենապետ Դոկտ. Կարպիս Տէր Եղիայեան, որ անցնող 29 տարիներուն յաջողութեամբ կատարած է սոյն պաշտօնը:

"Peacebuilding: One Person at a Time"

Saturday, February 23, 2019 / 8:00 am - 1:00 pm
Ann & Steve Morgan Auditorium / University of La Verne

Speakers: Victoria Osteen, M.A., MFT; Dr. Yoon Lee, Ph.D.; The Honorable Tom Latham; Elise Oshroff; Thomas D. Wilson, Esq.

Rotary District Governor: John Chace

Co-Chair: Dr. Garbis Demigueres, Ph.D.

Co-Chair: Michael D. Dennis

Donations: \$10,000 (includes certificate), \$50,000 (includes plaque), \$100,000 (includes plaque and certificate)

Event Registration: \$100 (includes lunch, certificate, and name tag)

Event Website: www.rotary5300.org

Activities: Youth-Centric Programming, Art for Peace Student Contest, Youth Peace Champions, Peacemaker of the Year Award

Հետաքրքրուողներ կրնան դիմել Դոկտ. Տէր Եղիայեանին (818) 523-3353:



ընթացքում պայմանաւորուածութիւն է ձեռքբերվել ՀԲԸՄ-ի աւագ դպրոցների աշակերտների ուսումնական պրակտիկան Հայաստանում, այդ թւում՝ ՀՀ կրթութեան եւ գիտութեան նախարարութիւնում կազմակերպելու վերաբերեալ: Բացի այդ, Հբըմ-ի խորհրդի անդամները բարձրաձայնել են սփիւռքի մասնագէտների ներուժը մեր երկրում տեղի ունեցող ծրագրերին ներգրաւելու հարցը:

ուսնկարները եւ ձեռքբերվել մի շարք պայմանաւորուածութիւններ: Նախարարը հանդիպել է նաեւ համալսարանի Մերձաւոր Արեւելքի լեզուների եւ մշակույթների ֆակուլտետի Նարեկացու անուան հայագիտութեան ամբիոնի ղեկավար Փիթըր Քաուլի հետ, որի ընթացքում քննարկուել են առաջիկայ համատեղ անելիքները: Արայիկ Յարութիւնեանը հրաւեր է ստացել մասնակցելու շաբաթ օրը կայանալիք հայկական սփիւռքի թեմայով խորհրդաժողովին, որտեղ նա հանդէս կգայ ելոյթով:

Join award-winning Armenian language and literature teacher Norayr Daduryan for a trip to Armenia to celebrate Vardavar, the ancient water festival dedicated to the goddess Astghik. On this once-in-a-lifetime journey, you will travel on the lush highlands of Armenia and Artsakh, immersing yourself deep into history along the way. Some of the highlights include Garni temple, Etchmiadzin cathedral, Tatev, Geghard and Noravank monasteries, Amberd castle, the charming resort town of Dilijan, Lake Sevan, and Van Ardi winery. You will also tour the picturesque town of Goris, plant trees, and practice your weaving skills with the traditional Armenian carpets! All tours available in Armenian and English.



For reservation & information, contact Christine at European Travel 818-842-7500 ext. 105 or N. Daduryan at norayrdaduryan@gmail.com



Ինչո՞ւ, Գեո՞րգ

ՎԱՐՔ Ս. ՄԽԻԹԱՐԵԱՆ

Ամէնքս ալ լսած ենք, կամ կարգ մը պարագաներու նաեւ փորձառաբար գիտենք թէ մեր կեանքերը ենթակա են ելեւէջներու, այսինքն մեր բաժինը կրնայ ըլլալ, ոեւէ ատեն, հարստութիւնը կամ աղքատութիւնը, առողջութիւնը կամ հիւանդութիւնները, ապահովութիւնը կամ վտանգը, երբեմն նոյնիսկ աներեւակայ լինելով: Զայս գիտնալով, բոլոր եկեղեցիներու մէջ ամուսնացողներ Աստուծոյ ներկայութեան կ'ուխտեն ամէն պարագայի իրենց ապագայ կեանքի ընկերոջ ըլլալ հաւատարիմ եւ հոգատար:

Հարցը այն է թէ ի՞նչ չափով կը գիտակցինք որ ժխտական վիճակները կրնան դառնալ իրականութիւն, կամ թէ զանոնք՝ այսինքն վտանգը, հիւանդութիւնը կամ աղքատութիւնը կը գետեղե՞նք «անհաւանական» կոչուած շրջանակի մը մէջ, կը յարմարցնենք զանոնք «ուրիշին» միայն, ու կը կախենք պատին վրայ:

Այո, կը պատահին, տեսած ենք ու լսած ենք սակայն... «ուրիշին» - կը նայինք անոնց՝ «անհաւանական» կոչուած շրջանակին ընդմէջէն:

Այդպէս խորհած էի նաեւ ես. հիւանդանոց մ'նալ, կարելի է անշուշտ, սակայն ես ինծի հաւատացուցեր էի, լուեկայն, թէ այդ կը պատահի ուրիշին միայն. եւ մնացած եմ 5 հիւանդանոցներ, 3 երկիրներու մէջ:

Վտա՞նգը: Այո, թու՞թակօրէն կը ընդունինք կարելիութիւնը, թէ իսկապէ՛ս կրնայ պատահիլ նաեւ ինծի՛, ու այդ ալ դրած ենք «անհաւանական» կոչուած շրջանակին մէջ ու կախած պատին վրայ:

Այդ ալ պատահեցաւ: Երկու անգամ առեւանգուած եմ, երկուքն ալ շատ վտանգաւոր թէեւ, սակայն մեկ հատին մասին իմացանք, շատ հաստատ աղբիւրներէ, որ անպայման պիտի սպաննէին՝ գիշերուան ժամու մը մէջ, երբ ո՛չ ինքնաշարժի երթեւեկ կար, ո՛չ մարդիկ, ո՛չ երեքտրականութիւն, ո՛չ բանակ ու զինուոր, այլ 7-8 զինեալ ոճրագործներ, որոնց մատը արագահարուածներու բլթակին վրայ, կը վիճէին իրենց սատանայական ծրագիրին արգելք հանդիսացող ուրիշ զինեալի կամ զինեալներու հետ, որոնք խոհեմութիւն չէին սեպած մեր հետ սպաննել նաեւ գերմանացի մեր տնօրէնը՝ Mr. Schustereder-ը՝ գերմանական դեսպանատունը ոտքի հանելով:

Մօտս ուսմը պայթի՞, այո, ոեւէ բան կարելի է, սակայն այդ կարելիութիւնն ալ գետեղած էի «անհաւանականութեան» շրջանակի մէջ ու պատին կախած:

Գիտե՞ք, այդ ալ պատահեցաւ, երբ ինքնաշարժին մէջ քովս նստողը ձեռնառումը հանեց, անջատելով ապահովութեան գամը եւ բռնեց զինք ինքնաշարժին դուրս հանել փորձող զինուորներուն երեսին, ու ի վերջոյ պայթեցաւ, մինչ ինքզինքս ինքնաշարժին դուրս նետած էի, ու հրաշքով ազատած: Այստեղ միջանկեալ յիշեմ թէ մեր առաջին գաւակը՝ Ստեփը, ծնաւ այս դէպքէն 24 օրեր ետք: Կառավարութիւնը հեռաձայներ էր աշխատածս ընկերութեան եւ խնդրած էին որ գան ու վերցնեն տոպրակի մը մէջ լեցուած մարմինիս անդամները...»

Այո՛, այս ալ պատահեցաւ՝ «անհաւանականութեան» շրջանակները փշրելով:

Զե՞ որ լուեկայն խորհած էի թէ այդպիսի բաներ կրնային պատահիլ, բայց ամենայն հաւանութեամբ ուրիշին, այսինքն անոնց որոնց մասին կը լսենք, շարունակաբար, լրատուութեանց մէջ:

Գանք մեր սիրելի Գէորգին պատմութեան:

Ինչո՞ւ, Գեո՞րգ:

Դասընկերս Գէորգը եւ թագուհին կ'որոշէն ընտանիք կազմել աստուածային պատուէրին համաձայն. «Աճեցէք ու շատցեք»:

Ամէն եկեղեցիի մէջ ամուսնացողները Աստուծոյ առջեւ ուխտած են, ի մէջ այլոց, իրարու տէր ըլլալ առողջութեան թէ հիւանդութեանց մէջ:

Աճեցան ու շատցան, սակայն պատահեցաւ նաեւ «անհաւանականը», ինչպէս Գէորգին տան մէջ, նաեւ օդանաւին մէջ սպասարկող երիտասարդ տիկին մը որուն դէմքը ահռելիօրէն կ'այլանդակուի ծանր արկածի մը հետեւանքով: Երբ ամուսինը տեղեակ կը պահուի իր սիրելի տիկնոջ կացութեան մասին, ան կը վազէ հիւանդանոց ու իր տիկնոջ վկայութեամբ, սենեակին դուռը կը բանայ ու տակաւին դրան շեմին, կը տեսնէ իր այլապէս անուշիկ տիկնոջ այլանդակուած դէմքը, կը մըրմըրթայ "No way!" ու առանց իսկ ներս մտնելու կը հեռանայ... անվերադարձ:

Սորված եմ տարիներու փորձառութեամբ թէ կեանքի մէջ շիտակը ընելը ընդհանրապէս դժուար է, երբեմն շատ դժուար, սակայն շատ վարձահատուց:

Այդ ուխտադրուած ամուսինները արձան յարաբերաբար դիւրինն էր՝ դարձնել երեսը, դժբախտութիւնը ծանրաբեռնել արդէն իսկ տառապող տիկնոջ վրայ, վարագոյրը քաշել ըրած ուխտին եւ վազել դէպի դուրս՝ անվերադարձ, եւ աչքերը բանալ հեռուն փայլփլող աշխարհի խաբուսիկ լոյսերուն:

Գէորգը եւ թագուհին ալ ամուսնական ուխտը ըրին Աստուծոյ ու ժողովուրդին առաջ, կազմեցին ընտանիք, մեծցուցին զաւակներ եւ օր մըն ալ այս աշխարհին անհամ մէկ անակնկալը թակեց իրենց տաքուկ ընտանեկան բոցին դուռը: Թագուհին բռնուած էր MS (Multiple Sclerosis) կոչուած հիւանդութեան:

17 երկար տարիներ տառապեցաւ իրենց տան մէջ: Անողոք հիւանդութիւնը զլացաւ իրեն իր՝ տիկնոջ ու զաւակներու մօր սիրոյ պարտականութիւնները: Ընտանիքի անդամները՝ ներառեալ Գէորգին մայրը, ծառայեցին թագուհին 17 երկար տարիներ, մինչեւ իր կեսրոջ մահը, որմէ ետք Գէորգը ստիպուած եւ աւելի լաւ շարունակական խնամք ապահովելու համար, իր սիրելի թագուհին կը փոխադրէ Convalescent Home մը Glendale-ի մէջ, որ իր բնակավայրէն 20 վայրկեան ճամբայ է:

Շատ դիւրին էր Գէորգին համար ամէն օր զանգահարել իր հիւանդ տիկնոջ եւ այցելել զինք քանի մը շաբաթ անգամ մը: Վերջապէս ան աշխատող տղայ է ու ամենօրեայ ծանր աշխատանքէն ետք ոեւէ մէկը պիտի փափաքէր վայրկեան առաջ հասնիլ տուն ու հանգչիլ՝ որպէսզի յաջորդ օրուան ծանր աշխատանքը կարելի ըլլար: Այդպէս շրջալ Գէորգը, այլ

«Շատախօսելով Մեղքէն Չես Խուսափիր».

Սողոմոն Իմաստունի Իմաստուն Սոքերն ու Առածները

Պատմութեան մէջ կայ մարդ մը, որուն անունը ինքնին իմաստութեան հոմանիշ է: Ատիկա հրէական երրորդ թա գաւորն է, տիրակալ Սողոմոնը, որ իր պետութիւնը հասցուց բարձրագոյն ծաղկման: Իւրաքանչիւր հարց լուծելու ժամանակ թագաւորը վկայները հարցաքննութեան կանչելու կարիք չունէր, քանի որ հայեացք մը անգամ նետելով հակամարտող կողմերուն վրայ՝ կը հասկնար, թէ ով է ճիշդ, ու ով՝ սխալ: Սողոմոն արքայի մտքերը ունին հազարամեակներու փորձ.

- Երբ երկիրը հեռանայ օրէնքէն, ուրեմն շատ կառավարիչներ ունի:

- Այս երկնքի տակ ամէն բան իր ժամն ու ժամանակն ունի. ծնելու ժամանակն ու մեռնելու ժամանակը, քանդելու եւ կառուցելու ժամանակը, քարերը թափելու եւ քարերը հաւաքելու ժամանակը, լուելու եւ խօսելու ժամանակը:

- Լուող յիմարը նոյնպէս կրնայ իմաստուն թուիլ:

- Կատաղութիւնը նաեւ խելամիտները կը կործանէ:

- Խոստացած ես՝ կատարէ:

Աւելի լաւ է չխոստանալ, քան խոստանալ ու չկատարել:

- Երկուքով ըլլալը աւելի լաւ

է, քան միակ, քանի որ եթէ իյնան, զիրար պիտի բարձրացնեն, բայց վա՛յ անոր, որ միայնակ կ'իյնայ ու բարձրացնող չ'ունենար:

- Զկայ հողագունդի վրայ մարդ մը, որ բարի գործ ընէ ու չմեղանչէ: Ատոր համար ալ ամէն ըսուած բառին ուշադրութիւն մի դարձներ... Քանի որ սիրտը շատ դէպքեր գիտէ, երբ դուն ալ չարախօսած ես ուրիշները:

- Որքան լաւ է ժամանակին ըսուած խօսքը:

- Զկայ աւելի մեծ շնորհ, քան սեփական գործերէն ուրախանալը, քանի որ այդ է մարդու կոչումը, քանզի չի կրնար տեսնել, թէ ինչ պիտի ըլլայ յետոյ:

- Ով կը խնայէ իր շուրթերը, ան իր հոգին կը պաշտպանէ, իսկ բերանը լայն բացողը անպայման ոչ մէկ լաւ բանի կը հասնի:

- Կեանքին վերաբերեցէք իբրեւ տօն, քանի որ կեանքը ինքնին մեծ արժէք ունի:

- Կեանքը բաղկացած է ներկայէն, իսկ ներկայի իմաստը ներկայի մէջ ըլլալն է:

- Շատախօսելով մեղքէն չես խուսափիր:

- Բարի անունը մեծ հարստութեան լաւ է:

ամէն օր, այո՛, ամէն օր, 8 1/2 երկար տարիներ, տաքուն թէ պաղուն, չորին թէ անձրեւին, յոգնած, սպառած կամ ոչ, այցելեց իր թագուհին, ո՛չ թէ ժպտի մը համար որ իր օրուան յոգնութիւնը մեղմացներ, այլ ծպտ մը բերելու սիրելիին, քիչիկ մը մեղմացնելով անոր տառապանքը:

Թագուհին օգնող հիւանդապահուհիները ըսած են թէ այս հիւանդութեամբ կ'ապրին մի քանի կարճ տարիներ միայն, սակայն թագուհին ապրեցաւ այդ հիւանդանոցին մէջ 8 1/2 տարիներ քանի որ ամէն օրուան իրիկուան 7-ի ստենները անոր ակնկալող աչքերը սեւեռած կ'ըլլային իր սենեակին դրան, ուրկէ կը սպասուէր յայտնուիլ իր սիրելիին, ուխտին հաւատարիմ ամուսինը՝ Գէորգը: Եւ այս այցելութիւններուն ան կը ոգեւորուէր, կը զօրանար: 4 կամ 5 անգամներ միայն կարելի չէ եղած այցելել, ուրախացնել իր տիկնոջ՝ շաբաթ մը արտերկրի ճամբորդութեան եւ քանի մը անգամ ալ անհանգստութեան պատճառաւ:

Այո՛, շիտակը ըրաւ Գէորգը, դժուար էր, նոյնիսկ շատ դժուար, սակայն ուխտին հաւատարիմ ըլ-


լալով ան մեծապէս ուրախացուց վշտահար կեանքի ընկերոջ, օրինակ հանդիսացաւ շատերուն, եւ զԱստուած փառաւորեց: Ապրի՛ս Գէորգ: Տէրը առատապէս օրհնէ քեզ ու օրինակելի կեանքը:

Զօրաւոր կերպով կը թելադրենք որ մեր Հայ Եկեղեցին հանրութեան առջեւ պատուէ ու զնահատէ այսպիսի օրինակելի հայրերիները՝ ի քաջալերութիւն ուրիշներուն:

(Եկեղեցիին համար-Գէորգին թիւն է (626) 796-9150:

Այստեղ պէտք է գնահատել նաեւ Գէորգին հանգուցեալ մայրը, զաւակները որ տառապեցան իրենց հարսին, մօրը հետ եւ չզլացան ոչ մէկ բան ինչ որ կրնային ընել իրենց սիրելիին: Կը գնահատենք ճարտարապետ Արիէլ Պապիկեանին, որ հաւատարմաբար այցելած է թագուհին եւ հոգեւոր DVD-ներ տարած, զինքը հոգեւորապէս զօրացնելու եւ քաջալերելու:

Այո՛, շիտակը ընելը ամէն մարդու գործ չէ, քանի որ ինչպէս յիշեցինք, այդ դժուար է, երբեմն շատ դժուար, սակայն մեծապէս վարձահատուց: Սա յատուկ է զօրաւորներու, Գէորգներու միայն, որոնք



SUPER BOWL PARTY
 Sunday, February 3, 2019 at 1 PM – 8 PM
 Homenmen Club 1060 N. Allen Ave. Pasadena, CA

Հարսանիք Ջանգեզուրի Շուրնուխի Գիւղի Բանաւանում

Եւ պատմութիւնը պատմելով է, որ անհատը, իմա՛ պատմողը, կը ստեղծէ եւ կը վերստեղծէ իր ինքնութիւնը

Սիւզան Ուիթիկ Ալպերթ

ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ

Գորիս էինք զնուծ, ինքնաշարժի խճուղու բարձունքի անտառակի եզրին ինքնաշարժը դանդաղեցրել էր ընթացքը, նրա վազգից յոգնած անիւները մի քանի պտոյտ անելով, անշարժացել: Ինքնաշարժից դուրս էինք ելել դիտելու Գորիսի չքնադազեղ տեսքը: Գեղեցիկ է Գորիսը, կանգնել էի խճուղիի առաջին ոլորանի եզրին, հովտում աստղափունջ համայնապատկեր էր փռուած: Դէպի ներքեւ հոսող ուղիղ փողոցների վրայ շարան-շարան բարձր տները զնուծ փառուած էին հովիտի կողերի դարաւանդներին, ընկողմանում անտեղից վազող գետակի ջրերում: Հովտում իջած մշուշի սարդոստայնն էր արեւի ճառագայթներից երբեք, իջնում ծառերի սաղարթներին: Աստղերի կարմիր լոյսով վառուած տների տանիքներն էին ժպտում արեւին, նրա սպիտակ ճառագայթներն էին իջել անտեղ, կարմիր ու սպիտակ լոյսի պերճանք էր: Խնձորենիների կանաչն էր տներին հովանի, որ քաղաքի կարմիր տանիքներով տները չբռնկէին արեւի լոյսի կրակից: Հեռու-մօտիկ կեռասենիներն էին բոցկլտում կրակի մանրիկ կայծերով: Կեռասն էր հասունանում, արեգակը ամառ էր բերում Գորիս քաղաքում:

Հովիտի հակադիր բարձունքին, վհուկների կախարդանքով, թէ՛, «է»-ի անէծքով քարացած մարդիկ են կանգնած՝ երեւի Նազարի դէմ կուռի ելած հսկաներն էին նրանք: Նազարը, նրանց տեսքից սարափահար, վազող առիւծին ակամայ որպէս նստրգ բազմած, արշաւել էր նրանց դէմ կուռի: Հսկաները, նրա ահից քարացել էին հանդիպակաց բարձունքին: Դեռ մինչեւ հիմա էլ, իրենց երկար, հաստ ու կլոր բերերը վերեւ պարզած, հայացքները հեռուներին, երեւի սպասում են արեւելքից արշաւել յանդգնող դուշմանին կուռ տալու: Եղել էմ հսկաների կողքին: Այնտեղ բուսել են բարձր, շատ բարձր քարածաղիկներ, իրար կողքի հաւքեր, բազմազլխանի վիշապներ, բաշերը հողմին տուած նազարի առիւծներ, թեւատարած արծիւներ, ճախրող եղջերուներ: Ակնապիշ կանգնել էմ նրանց կողքին, հոգուս երեւակայութեան ճախրանքով այնտեղ տեսել քարացած հայոց հին աստուածներ՝ Արային, Միհրին, Անահիտին, Վահագնին: Քարացած հսկաների կողքին տեսել էմ Սիւնիաց աշխարհի ազատութեան համար թուրք-դուշմանի դէմ մարտի ելած Միսթարին գլխահակ, զինակիցները սպաննել էին նրան...:

Յիշատակութեան արժանի մեծ գործերի հետ, Արմինա երկրում անհարիր արարքներ են կատարուել: Արդե՞օք, այդ հսկայ բարձունքը դրախտի մի կտորն էր, որը Աստուծոյ անէծքով քարացել էր, կարող է...:

Ոլորաններով իջնում էինք քաղաք, անցնում փողոցներով, ձեռքս ինքնաշարժի պատուհանից դուրս պարզած, ողջոյնում անցորդներին, բազալտէ ամուր բարերով պատած շարան-շարան տներին, նրանց առաջ հողին խոնարհած խնձորենիներին, արեւի լոյսով բռնկած կեռասենիներ

րին, գուարթ լոյս էր իջել երեւակայութեան տեսիլքի հեռուներին: Բնիկ Գորիսեցի Քուստունց-Սարգիսեան Լեւոնի աւագ որդի Ասպետի տան շէմում էինք, Սիմա քոյրս, Ասպետի ու գաւակների հետ վազում դէպի մեզ, գրկախառնում, անձկանօք նայում իրար, կարօտի ժպիտի ծիծաղ էր տան կից ճանապարհի եզրին, դրացիներն էին պատշգամբներ ելած Նայում մեզ: Հեռու, հեռու աշխարհի Մուսաների լեռան լանջերի շէնի Հալիական Լեզէնի Կապորայ Արմենակի Պօղոս ու Ժոզէֆինա որդիների ընտանիքների հարս ու փեսաներ, միասին հասել էին Ջանգեզուրի լեռներ: Այդ զարմիր Գորիսեցի եղաւ, Լեւոնի ազնուագարմ Ասպետ որդուն պարզեց երեք տղաներ, մէկ դուստր, հիմա նրանց զարմից բազում-մանչեր ու տղաներ են տղանցում Գորիս քաղաքում: Ջանգեզուրի լեռներ, Մուսաների պաշտամունքի լեռների նման այստեղ էլ քաջերի կուռ եղել, քաջերի յաղթանակներ եղել:

Բոլորս տան պատշգամբում էինք, ողջագուրում իրար, Պօղոս աղբեր, քոյրեր Սիմա ու Ժոզէֆինա պինդ փաթաթուել էին իրար, կարօտից լացում, իրենց այտերից իջնող մարգարտաշար արցունքներ հատիկները սրբում, ժպտում, համբուրում աղբեր Պօղոսին: Նստում աղանդերներով ու խոշոր շիշերով լիքը սեղանների առաջ, բարձրածայն կանչերով պատշգամբ գալիս Ասպետ-Սիմայի գաւակներ, թոռներ, սիրուած իրար, կարօտել էին իրար, կարօտ, մրրկաւ բաժանուած Արմին-Հայու համար այն ուրիշ իմաստ ունի, հոգու անդաստաններում զարմի սիրոյ բոցն է այն: Քարահունչի թուրթի օղի, բարկ է այն ինչպէս ձեռներին Բարգուշատի ձիւնապատ լեռների մրրիկ: Ասպետ, տղաներ, թոռներ լիքը բաժակները զարկում իրար, խմում քեռի Պօղոսի ու մօրքոյր Ժոզէֆինայի երկարակեցութեան կենացը, բարի մաղթանքներ յղում նրանց: Երկար ատեն չէին տեսել նրանց, օղուց թէ կարօտից արբեցած լիքը բաժակները նետում պարտէզ, չէ, չէին խելարուել...:

Սիմա ու Ժոզէֆինա քոյրեր նստած աղբեր, Պօղոսի դիմաց նայում-նայում, հայր Արմենակի ու մէրիկ Ջարուհիի ստուերները փնտռում նրանց դէմ քերում, նրանց ակներում, նրանց ձայնի ելեւէջներում, նանց խօսքում:

Իրիկուան աղջամուղջին, Սիմայի որդի Մարտիկի հետ գնացել Քարահունչ գիւղի ոչխարների մակաղեխտեղի, ոչխար գնել, յաջորդ օրը այն մատաղ անելու: Մատաղ, հրեաների նախահայր Աբրահամ որդուն մատաղ էր անում, իրենց Աստուած հրեշտակի հետ գարնուկ ուղարկել որդու փոխարէն այն մատաղ անելու, յետագայ սերունդներ այն վերածել աղօթքով ոչխարներ գոհելուն, այն էլ կենդանի էր չէ...: Քոյրս մատաղի եփած մսից եօթը տուն բաժին տուել: Ասպետի զարմից մեծ ու փոքր պատշգամբում էին, սեղանին էր գոհի խաշած միսը, մատաղը կատարելու ցանկութեան իրականացման համար օղու բաժակներն էին գնում, խմում գերդաստանների ողջութեան կենացը, քոյր

րեր ու եղբայր, փեսաներ իրարու ողջ լեռուք մաղթում: Մատաղ էին ուտում, օղի խմում, այնքան խմում որ մոռացել, ինչու էին մատաղի ճաշկերոյթ անում, Արմենակի հարս Անժէլան էր խօստացել մատաղ՝ Անժէլա կեսուրի ու Լագիսեան զարմից Արմենակի հոգիներին խաղաղութիւն լինէր, լոյս տեղար: Արմին-Հայ գանգեզուրցիները թող խմեն, թող արբենան, երկար էին պայքարել, բազում կուռներ տուել իրենց լեռների ու շէնների պաշտպանութեան համար:

Տան տիրոջ իրաւունքով նորէն քայլեցի քաղաքի փողոցներով: Նորէն կանգնեցի Բակունց Ակսելի տան դուռն շէմին, բարեւ տուի նրան, ուկնդրեցի նրա «Միւրանի փողի» անուշ հնչիւնները: Ակսելը իր երկերում բոցավառել էր Հայ գեղջուկի հոգու գեղեցկութիւնը, «Սեւ Յելերի Սերմնացան»-ում Տիր աստուծոյ մեհեանի աստուշանից վառած գրիչի լոյսով երգել իր հայրենի բնութեան հմայքը, իր աշխարհի լեռների լանջերի «Ալպիական Մանուշակ»-ը: Ընդհատեցին իր լեռնաշխարհի գովքի երգը, յանգցրին այդ լեռների «Ալպիական Մանուշակի» լոյսը, այդ չարի կարգերի «մարդուկը», եթէ կարողանար արեւի լոյսն էլ կը մարէր...:

Քայլում փոքրիկ հրապարակով, նրա եզրին է երկայրկանի բազալտակուռ տունը, նորէն կանգնեցի նրա ճակատի պատշգամբի առաջ, նորէն տեսնելու Անդրանիկ Փաշային, ուկնդրելու հայրենի երկրի համար կուռ տալու նրա բոցաշունչ խօսքը: Բնութեան պարզեւ՝ կեանքը, ոչ հէքիաթ, ոչ էլ երազ է, ո՞վ է ասում այն կարծ է, վայելի՛ր այն, արարի՛ր գիր, բարիք, բա՛ց մտքիդ յիշողութեան վարագոյրը, երկար գրուցի՛ր ըյաւերժութիւն ճանապարհով անցնող զարմիղ նախնիների հետ: Դո՛ւ, հրաշափառ բնութիւնից արարուած արորդի Արմին-Հայ, քեզ շնորհուած երեւակայութեան ճախրանքով գնա՛ քու «Սրբազան Օրինաց Երկիր»- դրախտային լեռնաշխարհ, մտի՛ր մեհեանները քու հին աստուածների, նրանց առաջ Նաւասարդ տօնախմբի՛ր, գնա՛ Բզնունեաց ծով, հոգուդ տաճարի լոյսերը վառիր նրան եզերած հրաբուխների կրակով, դիտի՛ր ծովակի ջրերի վրայ ծիածան լոյսի մէջ քու հին աստուածների ծնունդ, բարձրացի՛ր քու ցեղիդ հոգու երազային բերկրանք Արարատի գագաթ, ձիւններտիր աշխարհի երեսին, որ նրանց ամօթի խարանը սրբէր...: Տե՛ս, ինչքա՛ն պիտի արբենաս, խրախճանաս կեանքով:

Հրապարակի միւս եզրին Գորիսի Գուսան Աշոտն է պատուանդանին «կանգնած»: Ակնապիշ նայում իրեն, ափերով ջուր շատրուանում դէպի իր անդրին: Իր յաւիտենական ճամբին արդեօք արդէն հասե՞լ է Վահագն Յարդազդդի ձանապարհի իր ցեղի՛ հին աստուածների տաճարներ, այնտեղ էլ հնչեցնելու Ջանգեզուրի ծիրանի փողը: Գորիսի թիկունքի լեռան ամենաբարձր գագաթի զմբէթի տակ է հանգչում Աշոտը, որ ակները յաւերժ յարէր իր շէնին, լեռների կանաչ ծովակներին: Լեռան գագաթ էմ բարձրանում՝ նրան այցի գնում: Այլուան ծաղիկների խուրճը գրկած հասնում զմբէթ, խոնարհում նրա շիրիմին, ծաղիկները շարում տապանին, լուռ կանգնում, նրա հետ գրոցց անեմ: Վեր կա՛ց գուսան Աշոտ, վե՛ր կաց քամանչաղ վերցրու, նրա դողացող լարերի հետ քու տաղերի խօսքերը ասեմ, քեզ կարօտած արորդիները նորէն ցնծան, երգերիդ հնչիւնները

անտառների ծառերի սաղարթները մրրկեն, երգի փոթորիկ լինի, երգի լոյսի անձրեւ իջնի քու շէնին, նրա բարձունքին քարացած հսկաները արշաւի ելնեն դուշմանի դէմ, քարացած ծաղիկները նորէն հուրհրացող ծիածան կապեն:

Գուսան Աշոտ, շանթերի լոյսի կրակով մրրկած նրա երգերը հրգեհուած են յուզականութեամբ, իր աշխարհի լեռների լանջերի «Ալպիական Մանուշակների» ծիածանով, նրանց կանաչ ծովակների կոհակների սահանքի գեփիւռով, եղնիկների թուխքների արեւային լոյսով, նախնիների Միհր աստուծոյ լոյսի հէքիաթով շիկնած: Իր քամանչայի լարերից հոսել են սիրոյ կայծեր, հայրենի լեռների հովեր, արտերի ցորեանի ծովակների ալիքների խայտանք, ծիածանացած անտառների հրացոյք, գարնանային գեփիւռի համբուցի շշշիւն: Աշոտը յօրինել է տարբեր թեմաներով բազում տաղեր, նրանք հնչեցրել իր մով սարերի հովերի: հաւքերի դայլալների ձայններ լեւեհէջներով: Հարազատ մնալով ժողովրդական երգարուեստի ու թեմական միջոցներին, նրա տաղերի երգերը, նոր ու ինքնատիպ երաժշտական լեզուով են հնչել:

Գնում ենք Շուրնուխի՛ բանուորական աւան, վայելելու յուշ դարձած անցեալը, անուշ է յիշել, բացել մտքի լոյսով բոցավառուած վարագոյրը, հոգու աչքերով տեսնել նրա վրայ ելած դէմքերը, դէպքերը: Գորիսի գետակի ափին համընթաց գնացող ինքաշարժը՝ «Հոգոց հանել»-ով անցնում Քարահունչ գիւղի մօտով, բարձրանում բլուր: Ձորի յատակին փրփրում են Որոտանի արատահոս ջրերը: Արեւն է այդ բլուրի կողերին հոսում իր կրակը, նրա ջերմից այնտեղ աճում յաւերժութեան խորհրդանիշ նուռ, թուռու խաղող: Ոլորաններ, ասում էին մինչեւ կապանի մատոյցներ գնացող այդ ճանապարհով էին մասնատել Հայոց երկիրը, Ռուսը այն տուել «սեւ ոսկու» համով բարեկամ դարձած հեռու տափաստաններից եկած անօրէն, տաճիկ թուրքին: Ջանգեզուրցի Նժդէհ կուռ արել նրա հետ, կարմիր բանակը տանուլ տուել այն, ազատագրուած Ջանգեզուրի «Լեռնային Հայաստան» հանրապետութիւն ստեղծել: Արմին-հայերի նախնիների Փայտակարան նահանգը ու գանգեզուրի մի մասը Ատրպէյջան անուանել, խաշնարած թուրքին Ատրպէյջանցի մկրտել: Ինքնաշարժի դանդաղ իջնում ոլորաններով, Որոտանի ափին էինք, գնում նրա ջրերով երեսս ցողեմ, նրա արթնած ոգով հոգուս գուարթութիւն իջնէր: Նրա միւս ափին, ժամանակին Ատրպէյջանցի մի ընտանիք էր ասել: «Տաս» կոչուած ոլորաններով բարձրանում բլուրի գագաթ, հէքիաթ էր դարձել ոլորանների թուրքի քանակը, ամէն մարդ բարձրանալիս տարբեր թիւ էր ասում, մենք էլ առանձին հաշուել էինք, զարմանալու էր, դարձեալ տարբեր թուէր: Հարթ էր ճանապարհը, Մագրէի դաշտ, գանգեզուրցիների հետ որսի ելել այնտեղ, նրա թփուտների ստուերների տակից «Մորի» հաւաքել, մանր, համեղ, անուշահամ մորի՛ վայրի ելակ:

Ինքնաշարժը կանգնել էր Շուրնուխի գիւղի բանաւանի ճանապարհի եզրին: Լուռ էր բանաւանը: Առաջին տաղաւարի առաջ պարանից ձեռմակեղէն էր կախուած, նրա նոր բնակիչները յիշում էին մեզ: Տխուր էին միւս տաղաւարները, Ջանգեզուրի անուշ հովիկները նրանց

Մշտապես Դժբախտ Մարդկանց 10 Սովորութիւն

Երբեմն մարդիկ չեն նկատեր, երբ երջանիկ են: Եթէ անոնց հարցնեն, թէ ինչ կը նշանակէ այս հասկացողութիւնը, անոնք կը դժուարանան պատասխանելու: Սակայն, երբ մարդը երջանիկ չէ, ան յստակ կը գիտակցի եւ կը հասկնայ, որ ինք երբ պարուրուած է այդ զգացումով: Շատերուն կը թուի, որ ամէն ինչի մէջ մեղաւոր են կեանքի հանգամանքները: Սակայն, հետազոտողներու կարծիքով, երջանիկ մարդը ինքն է ինքզինք այդպէս դարձնողը, եւ ոչ մէկ փորձութիւն կրնայ խանգարել զինք: Ահա տասը կարեւոր սովորութիւն, որոնցմէ արժէ հրաժարիլ, եթէ կը փափաքիք վայելել կեանքը:



է յիշել, որ խնդիրներ կը ծագին բոլոր մարդոց մօտ եւ ձեռքն է հաւաքուիլ ու յաղթահարել զանոնք, փոխելով կեանքը դէպի լաւը:

1) Յոյսը դնել ապագայի վրայ: Գլխաւոր սովորութիւններէն մէկը, որ մեզի հնարաւորութիւն չի տար երջանիկ մարդ դառնալու, այսպիսի արտայայտութիւնն է. «Ես երջանիկ կ'ըլլայ, երբ նոր աշխատանք գտնեմ, երբ աշխատավարձս բարձրացնեն եւ այլն»: Կարեւոր չէ, թէ ինչպէս կ'աւարտէք նախադասութիւնը, չի շեղէք, այդ պարագային դուք ամէն ինչ կը դնէք հանգամանքներու վրայ, որոնք քիչ կախեալ են ձեզմէ: Չ'արժեր ակնկալել որեւէ անտեսանելի բան, այլ պէտք է աշխատիլ կեանքի բարելաւման համար արդէն հիմա: Կեդրոնացէք այն բանի վրայ, որ ձեզի համար կարեւոր է այսօր, եւ երջանկութիւնը շատ շուտով պիտի թափէ ձեր դուռը:

5) Յոռետեսութիւն: Ոչինչ կրնայ այդպէս փլուզել երջանկութիւնը, որքան յոռետեսութիւնը: Երբ դուք մշտապէս կը մտածէք եւ վատ բաներ կ'ակնկալէք, ամենայն հաւանականութեամբ այդպէս ալ կ'ըլլայ: Ի դէպ, յոռետեսական մտքերէն շատ դժուար է ազատիլ: Պէտք է համոզէք դուք ձեզ, որ անոնք անարժանապահ են: Ստիպեցէք ձեզ նայելու փաստերուն եւ պիտի հասկնաք, որ իրականութեան մէջ ամէն ինչ այդքան ալ վատ չէ, որքան կը թուէր ձեզի:

6) Բողոքելու սովորութիւնը: Եթէ դուք սկսիք մշտապէս բողոքել, իբրեւ արդիւնք միշտ պիտի ապրիք անհանգստութեան զգացումով: Այդպիսի պահուածքը վստահօրէն կարելի է անուանել քայքայիչ անձի համար: Եթէ մշտապէս համոզեմք մենք մեզի, որ ամէն ինչ վատ է, այլ մտքերու համար տեղ պիտի չըլլայ: Անկասկած, պէտք է խօսիլ ձեզ անհանգստացնող խնդիրներու մասին: Սակայն, կարելի չէ բողոքել մշտապէս եւ ամէն ինչ: Չէ՞ որ ատիկա դժբախտ ըլլալու ճանապարհ կը տանի եւ այլ մարդիկ չեն ուզեր ձեր հետ կապի մէջ ըլլալ:

7) Ճանձէն փրկ շինել: Վատ բաներ կը պատահին բոլորին հետ: Տարբերութիւնը այն է, որ երջանիկ մարդիկ կը տեսնեն զանոնք այնպէս՝ ինչպէս որ կան՝ ժամանակաւոր դժուարութիւններ, իսկ դժբախտ մարդիկ կը դիտարկեն զանոնք իբրեւ հերթական անյաջողութիւն իրենց կեանքին մէջ:

8) Խնդիրները գործի տակ պահել: Երջանիկ մարդիկ պատասխանատուութիւն կը կրեն իրենց գործողութիւններուն համար: Եթէ անոնք սխալ կը գործեն, ուստի պատասխան կու տան ատոր համար: Դժբախտ մարդիկ կը փորձեն պահել իրենց խնդիրները եւ սխալները: Իսկ ինչպէս յայտնի է՝ խնդիրը պահելով չես լուծեր, այլ զայն աւելի կը սրես:

9) Ինքնագարգացումէն հրաժարիլ: Քանի որ դժբախտ մարդիկ յոռետեսօրէն տրամադրուած են եւ չեն փորձեր վերահսկել իրենց կեանքը, անոնք նստած կը սպասեն, թէ ինչ պիտի ըլլայ իրենց հետ յետոյ, եւ նպատակներ դնելու, նոր բաներ սորվելու եւ ինքնակատարելագործման փոխարէն ուղղակի կը զարմանան՝ ինչո՞ւ իրենց կեանքին մէջ ոչինչ դէպի լաւը կը փոխուի:

10) Համեմատուիլ ուրիշներու հետ: Խանդը եւ նախանձը ոչ մէկ պարագայի ձեզի չեն օգներ երջանիկ դառնալու: Եթէ դուք ձեզ կը համեմատէք այլ մարդոց հետ, ուստի ժամանակն է դադարեցնելու ատիկա:

2) Վատնել շատ ժամանակ եւ ուժ՝ որեւէ բան ձեռք բերելու համար: Շատ մարդիկ, երբ կը սկսին շատ աշխատիլ, իբրեւ կանոն կը համոզեն իրենք զիրենք, որ ատիկա իրենց երջանիկ կը դարձնէ: Մեծամասնութեան կը թուի, թէ որքան շատ ըլլայ անոնց եկամուտը, այդքան աւելի լաւ պիտի զգան իրենք զիրենք: Սակայն, բազում հետազոտութիւններ ցոյց տուած են, որ ատիկա այդքան ալ այդպէս չէ: Երբ դուք ինկած էք դրամի եւ արժէքաւոր իրերու ետեւէն, ստանալով զանոնք, կրնաք հիասթափութիւն ապրիլ: Դուք կը գիտակցիք, որ անոնք չէին արժեր ձեր գործադրած ջանքերը եւ կարելի էր ծախսել վատնած ժամանակը նախասիրութեան մը, ընտանիքի եւ ընկերներու հետ ըլլալու վրայ, որ պիտի երջանկացնէր ձեզ:

3) Տուն մնալ: Երբ դուք ձեզ ապերջանիկ կը զգաք, կ'ուզէք մնալ տունը եւ ոչ մէկուն հետ կապի մէջ ըլլալ: Սակայն, այդպիսի պահուածքը կարելի է անուանել մեծ սխալ: Բնականաբար, իւրաքանչիւրիս կեանքին մէջ կ'ըլլան պահեր, երբ կ'ուզենք մնալ մենք մեզ հետ, բոլորէն հեռու: Սակայն, երբ ատիկա սովորութիւն կը դառնայ, ուստի շատ շուտ պիտի նկատէք, թէ ինչ - պէս ձեր տրամադրութիւնը կը փոխուի դէպի վատը: Այդ պատճառով ալ ստիպեցէք ձեզի տունէն դուրս ելլել, կապի մէջ ըլլալ մարդոց հետ եւ պիտի տեսնէք, որ շատ շուտով աւելի լաւ պիտի զգաք:

4) Զոհի դերի մէջ դիտարկել: Իբրեւ կանոն, դժբախտ մարդիկ կը համոզեն իրենք զիրենք, որ կեանքի մէջ ոչինչ կախեալ է իրենցմէ: Այդ պատճառով անոնք կը կարծեն, թէ իրավիճակը լաւացնելը վեր է իրենց ուժերէն: Սակայն, այդպիսի մօտեցումը կ'ամրապնդէ անօգնականութեան զգացումը: Միշտ պէտք

Ամենաուժեղ Հոգեկան Կնասը Ստորացումն է

Ամենաուժեղ հոգեկան վնասը ստորացումն է: Ուղեղը ամէն ինչ կրնայ յաղթահարել ու մարտել եւ ամէն ինչէ փորձ ու դաս քաղել ապագայի համար: Իսկ ստորացումը տանիլ չի կրնար: Ստորացումը ատով ալ կը տարբերի. անիկա անպատասխան հակադարձութիւն է: Ստորացնել կարելի է միայն այն պայմանով, որ մարդը չկրնայ պատասխանել: Ատոր համար ալ կը ստորացնեն ու կը նուաստացնեն երեխաները ու անոնց, որոնք հանգամանքներու բերումով ստիպուած են լուել եւ դիմանալ: Իսկ յետոյ անոնք կամ պիտի լան, կամ, ընդհակառակը, յիմարբար պիտի ժպտին, բան մը փնթփնթան, երթան, ուր ուզեն՝ հեզնական ծանրագոյն զգացողութեամբ:

Ուեէ մէկը կրնայ մտածել՝ խնդիր չէ: Ի՞նչ պիտի ըլլայ ստորացումը եւ բոլորի ներկայութեամբ, բայց չէ՞ որ չեն հարուածած: Կամ, եթէ դէմ առ դէմ նուաստացուցած են, ուստի ընդհանրապէս ոչ ոք պիտի իմանայ: Սարսափելի բան չկայ:

Իրականութեան մէջ սարսափելի բան կայ: Նոյնինքն ստորացումներէն ետք է, որ երբեմն տեղի կ'ունենան ինքնասպանութիւններ կամ հոգեկան խանգարումներ: Իսկ եթէ հոգեկան վիճակը ամուր է, միեւնոյն է, նստուած քը կը մնայ ողջ կեանքի ընթացքին: Եւ մարդը ամէն ինչի պատրաստ է, որ մոռնայ ստորացումը, իսկ անիկա ոչ մէկ ձեռով կը մոռցուի ա՛յն պատճառով, որ ամենաուժեղն ու ցաւոտն է:

Ի՞նչպէս Սորվիլ Արթնալ Վաղ Առաւօտեան

Ինչո՞ւ հարկաւոր է Առաւօտեան վաղ արթննալը միշտ տանջալից եղած է շատերու համար: Սկիզբը վաղ կ'արթննայինք մանկապարտէզ երթալու համար, յետոյ՝ դպրոց, յետոյ՝ աշխատանքի: Այնպիսի տպաւորութիւն է, որ զարթուցիչը ողջ կեանքի մէջ մեր ետեւէն ինկած է՝ չձգելով մեզի լաւ հանգստանալ: Սակայն, իրականութեան մէջ, վաղ արթննալը պատիժ չէ, այլ՝ երջանկութիւն:



Մարդը, որ սորված է վաղ արթննալ, կրնայ հասցնել ընել բազում գործեր եւ ինքզինք զգայ աւելի չաջողակ ու օգտակար: Ահա քանի մը խորհուրդ, որոնք պիտի օգնեն ձեզի արթննալու առաւօտեան 4-5 եւ վերջապէս դառնալու չաջողակ մարդ: Ինչո՞ւ պէտք է ատիկա. իրականութեան մէջ, եթէ դուք չէք գիտեր այս հարցին պատասխանը, դուք պիտի չկարենաք վաղ արթննալ:

Այս պարագային ոչ մէկ յորինուած պատճառ կ'աշխատի: Կամ այդ յստակ նպատակը կայ, եւ դուք առանց խնդիրի կ'արթննաք առաւօտեան 4-ին, գիտնալով ինչ եւ ինչի համար կ'ընէք ատիկա, կամ դուք կ'արթննաք զարթուցիչի հետ եւ յետագային կ'ունենաք վատ տրամադրութիւն՝ չիրականացուած պարտականութեան պատճառով: Ինչո՞ւ կարեւոր է ատիկա. կեդրոնացուածութիւնը եւ արդիւնաւէտութիւնը անհրաժեշտ պայմաններ են ամէն մարդու զարգացման համար: Աւաղ, այս իսկ որակներն են, զորս դժուար է զարգացնել: Վաղ արթնացումները կը սորվեցնեն կարգուկանոնի, որուն իբրեւ արդիւնք ձեր մօտ կը զարգանայ կեդրոնանալու կարողութիւնը: Այս երկու կարողութիւններով դուք ամէն ինչի կը հասնիք: Կ'արձանագ-

րենք ժամանակը. աւելի դժուար է վաղ արթննալ անոնց համար, որոնք ուշ կը քնանան: Դադրեցէք յոյսերը դնել միայն ձեր կամքի ուժին վրայ: Վերցուցէք նօթատետր եւ արձանագրեցէք ձեր քնանալու ժամը:

Մէկ շաբաթը բաւարար է հասկնալու համար, թէ որքան ժամանակ դատարկ կը վատնէք: Այնուհետեւ, սկսեցէք ենթադրականացնել ուղղել ձեր վարքը: Երկար ժամերը, որոնք անիմաստ կ'անցընէք համակարգիչին առջեւ պիտի երթան, եւ դուք, վերջիվերջոյ, պիտի սորվիք շուտ քնանալ: Ի՞նչ ընել առաւօտեան. նոր ապրելակերպի անցնելու կարեւոր մասը ծրագրաւորումն է: Կազմեցէք յստակ ծրագիր՝ որ ժամուն պիտի արթննաք, ինչ պիտի ընէք առաջինը:

Առանց այս ցուցակին ուղղակի վաղ արթննալ դժուար է՝ ամէն գործ պիտի թուի ընդհանրապէս ոչ այդքան կարեւոր: Դանդաղ, բայց ճիշդ մի՛ փորձէք մէկ անգամէն անցնիլ նոր ապրելակերպին: Ոչինչ պիտի շահիք: Եթէ դուք տարիներու ընթացքին կը քնանայիք գիշերուան մէկին եւ կ'արթննայիք առաւօտեան 9-ին, ուստի մէկ անգամէն փոխուիլը իրատեսական չէ: Շարժեցէք դանդաղ, բայց յստակ քայլերով՝ ամէն ազնամ շարժելով զարթուցիչի սլաքները 10-15 վայրկեան ետ:

ՍԼԱՔՆԵՐ (1) ԱՆՃՐԵԼՈՒ ԵՂԱՆԱԿԻՆ ԻՆՔՆԱՉԱՐԺ ՎԱՐՈՂՆԵՐՈՒՄ

ՎՈՒՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

Ձմրան անձրեւներուն վերադարձին հետ՝ շատ մը վարորդներու ինքնաշարժ քշելու (ան)կարողութենէն յայտնի կ'ըլլայ որ ամրան տաքին ու այլապէս բարեբեր արեւուն ճառագայթներուն պատճառով՝ վարորդական տարրական գիտելիքներէն որքա՞նը իրենց ուղեղի ծալքերէն ցնդած է: (Սիրելի՛ ընթերցող, եթէ այս նախաբանը քեզի չի վերաբերիր՝ խնդրեմ անցիր յաջորդ լուրին կամ յօդուածին):



Իսկ անոնց համար, որոնք կը շարունակեն կարգալ, անցնինք առաջ՝ յիշեցման կարգով. նաե՛ւ այն պատճառով, որ անուշադիր-անտարբեր վարորդներու շատութեան պատճառով, առաւել՝ պատահական թէ կազմակերպուած («սարքովի») արկածներու հետեւանքով, խենդ-ու-խելառ չքշողներուս ապահովագրութեան («ինչո՛ւրընս», ո՛չ՝ «իշուրանս») վճարումները երթալով կը բարձրանան:

Այսպէս, անկախ այն պարագայէն թէ յիշողութեա՞ն բացակայութեան հարց է, չիմանալու՞ հարց է, թէ՞ ընդհանրապէս՝ դիմացի վարորդը «բանի տեղ չդնել» ու անկիրթ վերաբերմունք է, ո՛չ ոք իրաւունք ունի «ճամբուն տէրը ե՛ս եմ» ամբարտաւան սկզբունքով ինքնաշարժ վարելու: Ո՛չ մէկ տարբերութիւն թէ ո՛վ ի՛նչ ինքնաշարժ ունի, կամ կը քշէ. ո՛վ աւելի հաստալից է եւ այդ վզին դրուած որո՞ւն շղթան («ցեփ»ը) աւելի հաստ է. ո՛վ կրնայ աւելի բարձր ձայնով բղաւել. ո՛վ կրնայ հերոսաբար ինքնաշարժին անիւները («ակերը») այնպիսի՛ աղմուկով դարձնել («ֆրցնել») որ ամբողջ թաղամասի մը անդորրը խանգարէ. ո՛վ կրնայ ամէնէն արտառոց «մուզիքա»ն իր ինքնաշարժին սփռել այնքան բարձր, որ իր վրայ կեղերոնացնէ անցորդներուն ուշադրութիւնը. (շատերուն ալ՝ հայհոյանքները. յաճախ՝ անմեղ մայրերուն

ուղղուած...):
(«Օրէնքի առաջ բոլորն էլ հաւասար են» լոգունգը չի վերաբերիր միայն մէկ երկրի կամ մէկ ժողովուրդի. այլե՛ւ՝ ամէն ամէնուն եւ՝ ամէն տեղ):

-- Առաւել եւս՝ պէտք է միացնել լուսարձակները, երբ մայրամուտ է եւ կամ՝ երբ եղանակը ամպամած է (մանաւանդ, երբ կլիման անձրեւոտ է):

-- Պէտք չէ քշելը շարունակել («գազ տալ») երբ երթեւեկութեան լոյսը կարմիր է. փորձեցէ՛ք ինքնաշարժը կանգնեցնել յատկապէս երբ ձեր դիմացէն եկող վարորդը կը փորձէ դէպի իր ձախը շրջադարձ ընել՝ լոյսը չկարմրած: Եւ այս՝ նամանաւանդ անձրեւոտ եղանակին: «Կարմիր ճրագին անցնել»ը ճարպիկութիւնն է: «Մտային հիւանդ»ութիւնն է:

Վերջապէս՝ գոնէ անձրեւոտ եղանակին պէտք է մեծ ճիգ թափել նշուած արագութեան համաձայն (քիչ մըն ալ դանդաղ) քշելու: Այդ արագութեան ցուցանշանները փողոցը զարդարելու եւ կամ՝ արագութիւն առաջարկելու համար չեն. երթեւեկութեան ապահովութիւնը երաշխաւորող ուսումնասիրութիւններու արդիւնքն են:

(Յաջորդիւ՝ Ընդհանրապէս ինքնաշարժ վարելու ժամանակ)

Փաշինեանի Դէմ Ձեւաւորուող

Շարունակուած էջ 2-էն

բարելաւելու ուղղութեամբ քայլեր անել, ինչի արդիւնքում դժգոհութիւններն անխուսափելի կը լինեն, եւ իրենք էլ կը փորձեն միջնորդաւորուած կամ անձամբ առաջնորդել այդ դժգոհութիւնները: Նկատենք, որ այս ամէնը մի կողմից էլ հենց Փաշինեանի օգտին է խօսում. ի վերջոյ, որեւէ մէկը նրա իշխանութեանը չի մեղադրում կոռուպցիայի, ապօրինութիւնների, ամենաթողութեան, ընտրակեղծարարութեան, անարդարութեան համար (իսկ եթէ արդարադատութեան վերաբերեալ քննադատութիւն կայ, ապա հեղինակնե-

րը պահանջում են լինչի դատատանի ենթարկել կամ առնուազն երկար ժամկէտով կալանաւորել նախկին իշխանութեան ներկայացուցիչներին՝ նրանցից վերադարձնելով ժողովրդից թալանած միջոցները): Այսինքն՝ Փաշինեանի իշխանութեան հասցէին չեն հնչում այն մեղադրանքները, որոնք հնչել են նախկինների դէպքում, եւ որոնք հենց դժգոհութիւնների, համաժողովրդական ընդվզման պատճառ դարձան: Սա ինքնին կարեւոր փաստ է: Իսկ սոցիալ-տնտեսական խնդիրներն իրենց լուծումը կը ստանան ժամանակի ընթացքում: Պարզապէս պէտք է մի փոքր համբերութիւն: «ԺՈՂՈՎՈՒՐԴ»

Սերժի Լուծիւնը

Շարունակուած էջ 6-էն

Սերժ Սարգսեանը »քաշել« է նախկին վարչապետ Կարէն Կարապետեանին, իր 160 հազար կուսակցիներին (մօտ այդքան է ՀՀԿ-ականների թիւը՝ պաշտօնապէս) եւ Հայաստանի ամբողջ ժողովրդին:

Նա խոստացաւ, որ Սահմանադրութիւն է փոխում աւելի լաւ Հայաստանի եւ ոչ իր վերարտադրութեան համար: Նա համատարած կեղծիքներով Սահմանադրութիւն փոխեց, խոստացաւ, որ այլեւս չի լինի վարչապետ, բայց չպահեց իր խոստումը:

Նա Կարէն Կարապետեանին ներքաշեց խաղի մէջ, օգտագործեց նրա արտաքին փայլն ու վարկաբեկուած չլինելը, սակայն ինքը մնաց վարչապետի աթոռին:

Ապրիլի 23-ին, երբ Սերժ Սարգսեանը հրաժարական տուեց, ՀՀԿ-ն իր ամբողջ կազմով պէտք է հրաժարուէր իշխանական բոլոր լծակներէր, այդ թւում՝ խորհրդարանում ունեցած իր աթոռներէր: Մինչդեռ ՀՀԿ-ն ոչ միայն չքաշուեց, այլ աթոռներէր կառչած մնաց մինչեւ վերջ՝ մինչեւ Դեկ-

տեմբերի 9-ի խայտառակ պարտութիւնը: Այդ ընթացքում ՀՀԿ-ն մի քանի անգամ փորձեց խափանել նոր, ժամանակաւոր կառավարութեան աշխատանքը, ինչը աւելի վարկաբեկեց նրան յեղափոխական զանգուածների աչքերում: Եւ այս ամէնը արւում էր Սերժ Սարգսեանի գիտութեամբ ու չերեւացող մասնակցութեամբ:

ՀՀԿ-ի վերնախաւում քիչ չեն եղել մարդիկ, որոնք անիմաստ են համարել մասնակցութիւնը Դեկտեմբերի 9-ի ընտրութիւններին, սակայն Սերժ Սարգսեանն ու ՀՀԿ նախընտրական ցուցակի առաջին դէմքերը պնդել են հակառակը: Նոյն այդ մարդիկ յորդորել են Սերժին հառաջադրուել վարչապետի պաշտօնում:

Այսօր Սերժ Սարգսեանից դժգոհ են առաջին հերթին մտերիմ ընկերները, որովհետեւ նրանք խաբուած, քաշուած ու յիմարացած են զգում:

Սերժ Սարգսեանի առաջնորդ մնալը ՀՀԿ-ում չի տեղաւորում քաղաքագիտական որեւէ տրամաբանութեան մէջ: ՀՀԿ-ն Սերժով ու այս դէմքով անելիք չունի այլեւս: Սիվիլնեթ

«Մենք Ձախողելու Իրաւունք Չունինք»

Շարունակուած էջ 6-էն

հաշուետու կառավարման սկզբունքների վրայ: Մենք ձախողուելու իրաւունք չունենք: Մենք պարտաւոր ենք արդարացնել մեր ժողովրդի վստահութիւնը եւ պաշտպանել ժողովրդավարութիւնը»:

Փաշինեան իր ֆէյսպուքեան էջին գրառում ընելով, տեղեկա-

ցուցած է, որ միջոցառման մասնակցելու նպատակով Կիրակի պիտի մեկնի Չուիցերիական Տաւոս, ուր այս տարի քննարկման գլխաւոր թեմաներէն պիտի ըլլան նոր ճարտարարութեստի զարգացման դարաշրջանին միջազգային համագործակցութեան, Եւրոմիութեան տնտեսական զարգացման վերաբերող հարցեր:

Արայիկ Յարութիւնեան

Շարունակուած էջ 8-էն

թեան կենտրոնի աշխատանքներին: Արայիկ Յարութիւնեանը գրոց է ունեցել կենտրոնի ղեկավար Սալբի Ղազարեանի հետ, որի ընթացքում կոնկրետ պայմանաւորուա-

ծութիւն է ձեռքբերվել հայկական սփիւռքի հնարաւորութիւնները, կադրերը, ինչպէս նաեւ կենտրոնի հզօրութիւններն ու ներուժը կրթութեան եւ գիտութեան զարգացման ուղղութեամբ օգտագործելու վերաբերեալ:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* \$50,00 * \$100,00 (first class) for USA
\$ 125,00 (Air Mail) for Canada.
\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----
Address: -----
City: ----- State: ----- Zip Code: -----
Country: -----
Tel: ----- Email: -----

Զօրացիւք Օժանդակենք Փրկենք

SYRIAN ARMENIAN RELIEF FUND
www.syrianarmenianreliefund.org

Syrian Armenian Relief Fund
P. O. Box 1948
Glendale, CA 91209-1948

ՄԱՅԱԶՂ



ԹԱԳՈՒՀԻ ՆԻԿՈՂՈՍԵԱՆ
Հոկտեմբեր 10, 1928-2019

Սրտի դառն կակիծով կը գուժեն մահը մեր սիրեցեալ մօր, մեծ մօր եւ հարազատին՝ Թագուհի Նիկողոսեանի մահը որ պատահեցաւ Շաբաթ, 19 Յունուար, 2019ին յետ երկարատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութիւնը տեղի պիտի ունենայ Երեքշաբթի, 29 Յունուար, առաւօտեան ժամը 11:30ին Ալթատինայի Mountain View գերեզմանատան մէջ:

Սգակիրներ՝

Այրի Տիկ. Սիլվա Նիկողոսեան եւ զաւակունք թոռները՝

Սեւակ, Մարալ եւ ճան

Այրի Տիկ. Անահիտ Պալեան

Տէր եւ Տիկ. Վահէ եւ Սեդա Նիկողոսեան

Ռընէ Նիկողոսեան

Տէր եւ Տիկ. ճանի եւ Այտա Նիկողոսեան

Տէր եւ Տիկ. Հերի եւ Անգին Նիկողոսեան

Տէր եւ Տիկ. Մայքըլ եւ Սօսի Պալեան եւ զաւակունք

Տէր եւ Տիկ. Տէնի եւ Նաթալի Պըրրինէզ

Քոյրը՝ Այրի Տիկ. Մարի Մանկրեան

Տէր եւ Տիկ. Վիգէն եւ Սալբի Մանկրեան եւ զաւակունք

Տէր եւ Տիկ. Թարըք եւ Մանտրա Պուրժի եւ զաւակունք

Տիկ. Օժէն Արսէնեան եւ զաւակունք

եւ համայն Նիկողոսեան, Պալեան, Մանկրեան, Պուրժի, Արսէնեան,

Տէր Յակոբեան, Ազիզեան եւ Միսիթարեան ընտանիքները:

ՏԱԲԱԿՏԱԿԱՆ

Նոր վերնատան Պատուոյ անդամները ՓԱՅԼԱԿ ԱՀԱՐՈՆԵԱՆ-ի մահուան տխուր առիթով փոխան ծաղկեպսակի \$150 կը նուիրեն «Մասիս» շաբաթաթերթին:

Յիսնամեակ Այցելութեանց

Շարունակուած էջ 14-էն

քաղաքը եւ իր շքախումբի անդամներով այցելած Ս. Գէորգ հայոց եկեղեցին ուր 150 հայեր կ'ապրէին: Պատրիարքը «Հրաշափառ»ով մուտք գործած է, պատարագած է Միւռոն քահանայ Այվազեան եւ Շնորհք Պատրիարք տուած է իր հոգեւոր պատգամը:

Նոյն օր Մերտինէն անցնելով կանգ կ'առնէին նախ Տէյր-իւլ-Չաֆարան եւ ապա Մար Կապրիէլ ասորիներու վանքերը, ուր երկու յարանուանութեանց պետերը միասնաբար պաշտամունք կատարած են:

Վան, Պիթլիս, Աղթամար

Տիարպեքիր վերադառնալով, Պատրիարք Հայրը տեղւոյն Ս. Կիրակոս եկեղեցւոյ մէջ պատարագ կը մատուցանէր եւ Ս. հաղորդութիւն կը մատակարարէր տեղւոյն հայ հաւատացեալներուն: Անկէ վան կ'ողեւորէր, անցնելով Պիթլիսէն եւ Արտամետէն, տալով նաեւ վանի նահանգապետին իր պաշտօնական այցելութիւնը: Յուզումով կը տեսնէր վարագայ վանքը, շուրջի եօթը եկեղեցիները՝ բոլորը կիսաւէր, եւ Սեպտեմբեր 3-ին շոգենաւով կ'այցելէր Վանայ լճի Կտուց եւ Առտէր կղզիներու վանքերը ուր կանգուն կը մնային Ս. Կարապետ եւ Աղթամարի անուանի Ս. Խաչ եկեղեցիները: Ս. Խաչ մեր օրերուն բարեգարգուն-

ցաւ, իր գմբէթին վերստին ազուցուեցաւ խաչը, ճանչցուելով որպէս հայ եկեղեցի, եւ տարեկան ուխտի օրուան վերացման խաչի տօնին, արտօնուեցաւ սուրբ պատարագ մատուցանել դուրսէն հարիւրաւոր ուխտաւորներու ներկայութեան:

Կարս, Էրզրում, Անի

Սեպտեմբեր 4-ին Պատրիարք Հայրը կ'այցելէր Կարսի Ս. Առաքելոց եկեղեցին որ թանգարանի վերածուած է այժմ իր գմբէթաւոր հոյակապ կառուցով, եւ ապա՝ էրզրում եւ Անիի աւերակները՝ Մայր Եկեղեցին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եւ Ս. Փրկիչ կիսաւէր եկեղեցիները: Իսթանպուլ վերադարձէն առաջ Պատրիարքն ու խումբը կ'անցնէին Տրապիզոնէն ու Սամսոնէն տեսնելով հայկական եւ յունական վանքերը: Իսթանպուլ կը վերադառնային Սեպտեմբեր 7-ին, երեք շաբթուան շրջապայութենէ ետք:

Ի պատիւ Շնորհք Պատրիարքի հարկ է կրկին արձանագրել որ իր այցելութիւնները պսակուեցան հայ բեկորներու փրկութեամբ, հաւաքելով հարիւրաւոր հայորդիներ եւ զանոնք իր հովանիին տակ առնելով իսթանպուլի մէջ, ուր անոնք որպէս հայ ապրեցան, ուսում ստացան, աճեցան եւ գործի մարդ դարձան: Տառացիօրէն ան փրկեց հայու մնացորդացը, որոնք թրքանալու եզրին հասած էին արդարեւ:

Հարսանիք Չանգեզուրի Շուրնուխի Գիւղի Բանաւանում

Շարունակուած էջ 16-էն

պատահանների փեղկերն էին օրօր անում: Նրանց առաջնորդել հայրենադարձի մեր տաղաւարի սենեակներ, Սիմա, Ժողէֆինա քոյրեր Պօղոս աղբերին գրկած լացում էին, այնտեղ էր իրենց փոքրիկ ժողէֆ եղբայրը մահացել, հարենադարձի մեր զարմից առաջին մահը: Նրանց տարել էի այն հողամասը, որտեղ Լազիսեան Արմենակ, Պօղոս տաղաչի հետ գետնախնձոր ու այլ բանջարեղէններ էին մշակել: 1948 թուականի հայրենադարձ ընտանիքի առաջին «Նոր Տարի» գիշերը, Սիմա ու Ժողէֆինա չիշում էին այն, Արմենակ հայրը ընտանիքին դուրս բերել տաղաւարի բացատ, Մայր Զարուհի, հօրաքոյր Նեկտար բարձր ձայնում իրենց երկրի «Լու-Լու» բացակա թիւնն էին բարձրաձայնել, հայր Ամենակ իրենց երկրի Նոր Տարիին նուիրուած տաղեր երգելով շորջ պար բռնել, ամբողջ բանաւանն էր հաւաքուել նրանց շուրջ բոլորը: Զարմանքով դիտել այն, ծափ տուել, իրենք էլ պարի շարքեր մտած նմանակել այն: Արշակ Տայի, որպէս գործարանի պահպանութեան խմբի պետ, իրեն վստահուած որսորդական հրա-


ցանով համազարկ տուել, երկինք բարձրացած բոցերը լոյս էին ցանել անտառի վրայ: Նա Հպարտանում էր, որ որպէս պարտիզան մասնակցել էր Զանգեզուրի կռիւներին, նկարահանուել «Զանգեզուր» շարժանկարում: Այ մարդ, այնտեղ պիտի լինէիր, որ տեսնէիր այդ լեռնական մարդկանց պարը, հաստատ պիտի խենթանայիր, դու էլ պարի պիտի ելնէիր: Բանաւանում պաշտօնավարող Ռուս մարդիկ էլ բացատում էին, նրանցից կիսելով՝ հացթուխ կին Փաշայի հետ, իրենց պարը բռնել, միւս ուսաներն էլ առանձին ու խմբովին իրենց պարերը բռնել: Պար ու երգ էր բացատում, նմանը երբեք չէր եղել բանաւանում: Առաւօտ, արեւն էր իր առաջին շողերը փռել ծառերի սաղարթներին, ողջագուրուել էին, «Նոր Տարի» առաջին լուսաբացն էր, բարի մաղթանքներ լղել իրարու:

Շուրնուխի գիւղին կից «Ղափանի Փայտամշակման Գործարան», նրա բանաւանը մեր կեցութեան առաջին հանգրուանը եղաւ, բոլորս բարի ու ուրախ չիշում այն:

(Շարունակելի 1)

HOUSE FOR RENT
1 Bed 1 Bath Brand New Appliances House
Crystal View Tujunga
818 314 7709

NATIONAL NOTARY ASSOCIATION
NOTARY PUBLIC
MEMBER
Garine Depoyan
626-755-4773
554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106
ghdepoyan@gmail.com

VA Print Media
Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles
Նոր Գիրքերու Տպագրութեան եւ Հին Գիրքերու Նորոգութեան Համար Հեռաձայնել՝ ՎԱՀԷ ԱՋԱՊԱՀԵԱՆԻՆ

Vahe Atchabahian
1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com

ՄԱՐԶԱԿԱՆ

«Լիվերպուլի» 3 Միաւորն ու «Մանչեսթեր Եունայթեդի» 7-րդ Անընդմէջ Յաղթանակը



Անգլիայի առաջնութեան 23-րդ տուրում առաջատար «Լիվերպուլն» ընդունեց «Քրիսթալ Փելասին» եւ առաւելութեան հասաւ 4:3 հաշուով: Գերմանացի Եուրգեն Կլոպի գլխավորած թիմին յաղթանակ բերեցին եգիպտացի Մոհամեդ Սալահի դուբլը եւ պրագիլացի Ռոբերտո Ֆիրմինոյի ու սենեգալցի Սադիո Մանէի կոլերը:

«Լիվերպուլը» մրցաշարային աղիւսակը գլխավորում է 60 միաւորով եւ 7 միաւոր առաջ է մէկ հանդիպում քիչ անցկացրած ախոյեան «Մանչեսթեր Սիթիից»:

«Մանչեսթեր Եունայթեդը» 45-ամեայ նորուեգացի Ուլի-Քոլմար Սուլշերի գլխավորութեամբ տանը մրցեց «Բրայթոնի» հետ եւ յաղթեց 2:1 հաշուով: Դաշտի տէրերի կազմում աչքի ընկան ֆրանսացի Պոլ Պոգբան եւ անգլիացի Մարկուս Ռեշֆորդը:

«Մանչեսթեր Եունայթեդը» բոլոր մրցաշարերում 7 անընդմէջ յաղթանակը տարաւ Ուլի-Քոլմար Սուլշերի գլխավորութեամբ: Նորուեգացի մասնագէտը «Մանչեսթեր Եունայթեդի» պատմութեան առաջին մարզիչն է, որը մանչեսթերեան ակումբում մեկնարկում է 7 յաղթանակով: Նա գերազանցեց նաեւ Մեթ Բասբին, որը 1946-ին Անգլիայի առաջնութիւնում յաղթել էր մեկնարկային 5 խաղերում: Մանչեսթերեան թիմը Սուլշերի հետ տարաւ 6-րդ յաղթանակը Անգլիայի առաջնութիւնում:

Պրեմիեր լիգայի նախորդ 5 խաղերում «Մանչեսթեր Եունայթեդը» յաղթել էր «Բորնմութին» (4:1), «Կարդիֆին» (5:1), «Հադերսֆիլդին» (3:1), «Նիւքասլին» (2:0) եւ «Տոտենհեմին» (1:0), Անգլիայի գաւաթի խաղարկութիւնում պարտութեան էր մատնել «Ռեդինգին» (2:0):

Լոնտոնեան Դերբիում 2:0 Հաշուով «Արսենալ» Յաղթեց Չելսի«-ին

Անգլիայի Պրեմիեր լիգայի 23-րդ տուրում լոնտոնյան դերբիի շրջանակում «Արսենալ»-ը սեփական յարկի ներքոյ 2:0 հաշուով վստահ յաղթանակ տուեց «Չելսի»-ի նկատմամբ:



Խաղի հաշիւը 14-րդ րոպեին բացել է Ալեքսանդր Լիակազետը: 39-րդ րոպեին էլ իր թիմի առաւելութիւնը կրկնապատկել է Լորան Կոնսեյնին:

Հենրիխ Միխայիլովիչը յայտարարեց չէր հանդիպմանը, քանի որ շարունակում է ապաքինուել նախկինում ստացած վնասուածքից:

Այսպիսով, վաստակած 44 միաւորով «Արսենալ»-ը մնում է 5-րդ տեղում, իսկ «Չելսի»-ն 47 միաւորով՝ 4-րդ տեղում:

«Բարսելոնա»-ն Յանկանում է Պայմանագիր Կնքել Ֆրանսացի 16-ամեայ Տաղանդի Հետ

«Բարսելոնա»-ն հետաքրքրուած է «Սոչո»-ի կիսապաշտպան Լուսին Ագուամէի ծառայութիւններով: Կատալոնացիները ցանկանում են 16-ամեայ պատանուն հրաւիրել ամբարնը:

Ֆրանսացի պայմանագիր ունի «Սոչո»-ի հետ մինչեւ 2020 թուականի ամբարնը, սակայն դա ոչ պրոֆեսիոնալ բնոյթի է:

Նշում է, որ ակումբը արդէն առաջարկել է իրաւաբանական ուժ ունեցող համաձայնագիր, եւ եթէ Ագուամէն այն ստորագրի, «կապտանունագոյններ»-ը ստիպուած կը լինեն աւելի մեծ գումար ծախսել տաղանդաւոր ֆուտպոլիստի տեղափոխութեան համար:

Յաւելենք, որ խաղացողը հանդէս է գալիս ֆրանսայի պատանեկան հաւաքականի կազմում, սակայն իրաւունք ունի յետագայում ներկայացնել կամերունի ընտրանին:

Արման Փաշիկեանն ու Մարիա Գեորգեանը՝ Շախմատի Հայաստանի Ախոյեան



Տիգրան Պետրոսեանի անուան շախմատի տանը ընթացող Հայաստանի շախմատի տղամարդկանց եւ կանանց առաջնութիւններում յայտնի են յաղթողները:


Նախափերջին՝ 8-րդ տուրում, տղամարդկանց մրցաշարի առաջատար Արման Փաշիկեանը ոչ-ոքի խաղաց իրենց հետապնդողներից մէկի՝ Տիգրան Լ. Պետրոսեանի հետ եւ վաստակեց 6 միաւոր: Նրան հետապնդող միւս երկու շախմատիստները՝ Սամուէլ Տէր-Սահակեանն ու Ռոբերտ Յովհաննիսեանը, նոյնպէս ոչ-ոքի խաղացին իրենց մրցակիցների հետ եւ չկարողացան կրճատել միավորների տարբերութիւնը:

Այդպիսով, Արման Փաշիկեանը առաջնութեան աւարտից մէկ տուր առաջ գեղեցրեց 1-ին տեղը եւ նուաճեց Հայաստանի հաւաքականի ուղեգիր: Մրցանակային միւս տեղերի համար կը պայքարեն վերը նշուած երեք շախմատիստներն ու արդէն նախկին ախոյեան դարձած Հայկ Մարտիրոսեանը, որոնք ունեն 4,5-ական միաւոր:

Կանանց առաջնութիւնում մրցակցութիւնից դուրս է Մարիա Գեորգեանը, որը ընթացիկ 8-րդ տուրում չնայած ոչ-ոքի խաղաց Մարիամ Մկրտչեանի հետ, սակայն վաստակեց 6 միաւոր եւ անհասանելի դարձաւ իր մրցակիցների համար, քանի որ նրանք էլ ոչ-ոքի աւարտեցին իրենց պարտիաները եւ չկարողացան կրճատել առաջատարի հանդէպ եղած 1,5 միաւորի տարբերութիւնը:

Կարէն Խաչանովը Պարտութիւն Կրեց, Նաղալը Երրորդ Յաղթանակը Տարաւ

Աշխարհի 11-րդ ռակետ, Ռուսաստանի ուժեղագոյն թենիսիստ Կարէն Խաչանովը դուրս մնաց Մելբուրնում անցկացուող թենիսի Աւստրալիայի բաց առաջնութիւնից:



Երրորդ շրջանում հայ մարզիկը 3 սեթում պարտուեց սպանացի Ռոբերտո Բաուտիստա-Ագուտին, որը պայքարից դուրս էր թողել նաեւ բրիտանացի էնդի Մարեյին: 2 ժամ 10 րոպէ տեւած մրցախաղում մոսկուացի 22-ամեայ թենիսիստը պարտուեց 4:6, 5:7, 4:6 հաշուով:

Առաջին Ռակետ Սիմոնա Հալեպը Ուժեղ էր Վիճուս Ուիլիամսից

Աշխարհի առաջին ռակետ Սիմոնա Հալեպը նուաճեց թենիսի Աւստրալիայի բաց առաջնութեան 1/8 եզրափակիչի ուղեգիր: Ռումինացի մարզուհին 6:2, 6:3 հաշուով առաւելութեան հասաւ ամերիկացի Վիլուս Ուիլիամսի նկատմամբ: Մրցախաղը տեւեց 1 ժամ 18 րոպէ:

Քառորդ եզրափակիչի ուղեգրի համար Սիմոնա Հալեպը կը մրցի Սերենա Ուիլիամսի հետ, որը պարտութեան էր մատնել ուկրաինացի Տայանա Յաստրեմսկային:

Սիմոնա Հալեպը անցած տարուայ AusOpen-ի եզրափակիչում պարտուել էր դանիացի Կարոլինա Վոզնյացկուս:

Յայտնի է, Թէ որ Դէպքում Քեյնը Կը Լքի «Տոտենհեմ»-ը

«Տոտենհեմ»-ի յարձակուող Հարի Գեյնը կը լքի լոնտոնեան ակումբը, եթէ «խթաններ»-ը չկարողանան Ախոյեանների լիգայի ուղեգիր նուաճել:

Նշում է՝ անգլիացին հասկացնել է տուել, որ չի պատրաստուած հանդէս գալ թիմում, որը չի մասնակցելու Ախոյեանների լիգայի խաղարկութեանը:

Յիշեցնենք, որ երիտասարդ յարձակուողը վնասուածք ունի եւ իր թիմին չի կարող օգնել մինչեւ Մարտ:

25-ամեայ ֆուտպոլիստի ծառայութիւններով հետաքրքրուած են մի շարք գրանդ ակումբներ, իսկ գլխավոր հաւակնորդները Մադրիդի «Ռեալ»-ն ու «Բարսելոնա»-ն են: